Ազգ
Azg
armenian daily

12 ՄԱՅԻՍ 1998 ԵՐԵՔՇԱԲԹԻ # 82 (1585)

«Նյու Յորք թայմսի» հարցազրույցը Ամենայն հայոց կաթողիկոսի հետ

ԵՐԵՎԱՆ, 11 ՄԱՅԻՍ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»-ԱՐՄԵՆՊՐԵՍ
«Նյու Յորք թայմսը» հրապարակել է մի հարցազրույց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսի հետ, որն այս օրերին Հյուսիսային Ամերիկայի հայոց թեմի հրավերով ԱՄՆ-ում է գտնվում ամերիկահայ թեմի ստեղծման 100-ամյա հանդիսությունները նախագահելու համար:

Թերթը նշում է, որ ավելի քան վեց միլիոն քրիստոնյա հայերի հոգեւոր առաջնորդը օքսֆորդյան կրթությամբ աստվածաբան է եւ սահուն անգլերեն է խոսում: Եվ խոսում է այն մասին, թե որքան կարեւոր է բարձր տեխնոլոգիաների եւ արագընթաց փոփոխություններով լի մեր այս կյանքում քրիստոնեական դաստիարակություն ձեռք բերելը:

Հոդվածում անդրադարձ կա նաեւ 1915 թվականի հայկական ջարդերին, նշելով, թե Օսմանյան կայսրությունը ջանացել է վերացնել մեկ միլիոն 800 հազար հայի. նվազագույնը 600 հազարը կոտորվել է սովից կամ զինվորների ձեռքով:

Հոդվածագիրը մեջբերում է Վեհափառ հայրապետի խոսքերը. «Հայ ժողովրդի պատմությունն իմ մեջ ունենալով, ես հավատում եմ, որ հայ քրիստոնյաները իրենց արեւմտյան հավատակիցների հետ մեկտեղ ունեն երազանքի եւ հույսի դավանաբանական միեւնույն ընկալումը»:

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրական փոփոխությունների ուրվականը կարծես թե հանգրվանում է Հայաստանում

Հարցազրույց ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի Գագիկ Հարությունյանի հետ

– Հենց «նախագծային» փուլից ՀՀ Սահմանադրությունը իշխանություն-ընդդիմություն առճակատման գլխավոր պատճառներից մեկն էր: «Սահմանադրական» անջրպետը կարելի էր դիտել լոկ որպես դիրքային քաղաքական պայքար, սակայն ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, դուք եւս սկզբունքային եւ հետեւողական դիրքորոշում ունեք սահմանադրական բարեփոխումների հարցում: Որո՞նք են ձեր փաստարկները:



– Ես կցանկանայի այստեղ առանձնացնել մի քանի հարցեր, որոնք շատ հաճախ եւ շփոթ են առաջացնում, եւ ճիշտ չեն ընկալվում ու մեկնաբանվում: Պետք է ընդունել, որ սկզբունքորեն ցանկացած սահմանադրություն ենթակա է նաեւ փոփոխության, որովհետեւ հասարակությունը, հասարակական հարաբերությունները զարգանում են, խորանում եւ անհրաժեշտություն է առաջանում, որ դրանց փոխկապակցվածությունը այս երկրի հիմնական օրենքում նույնպես արտացոլանք գտնի, ապահովելով հարաբերությունների հստակ կանոնակարգվածությունը: Առանձնապես այդ հարցը կարեւորվում է, երբ երկիրը գտնվում է անցումային շրջանում, երբ հասարակական հարաբերությունները ավելի դինամիկ են, ավելի փոփոխուն:

Երբեք չի կարելի ասել, որ Սահմանադրության փոփոխության խնդիրը դրվեց այսօր կամ դրվեց ընդդիմության կողմից: Անցած տարիներին տարբեր մակարդակներում, այդ թվում եւ մասնագիտական մակարդակով, քննարկվում էր ինչ հաջողվեց, ինչ չհաջողվեց: Մասնավորապես, ես նույնպես 97 թ., երբ հրատարակեցի իմ մենագրությունը նվիրված սահմանադրական արդարադատության հիմնահարցերին, անդրադարձա Սահմանադրության որոշ թերություններին, չլուծված հարցերին, որոնք Հայաստանում սահմանադրական արդարադատությունը դարձնում են խիստ անկատար:

Շար. ▸ էջ 4

ՀՀՇ վարչությունը մերժեց Վանո Սիրադեղյանի հրաժարականը

ՀՀՇ վարչության վերջին նիստում Վանո Սիրադեղյանը հրաժարական է տվել ՀՀՇ վարչության նախագահի պաշտոնից: Հրաժարականը, նրա պնդմամբ, դրվել է փակ գաղտնի քվեարկության, որի արդյունքներով Վանո Սիրադեղյանը վերահաստատվել է՝ վարչության 26 ներկա անդամներից 24-ը դեմ են եղել սույն հրաժարականին: Վանո Սիրադեղյանն առայժմ ձեռնպահ մնաց իր քայլը մեկնաբանելուց: Իսկ ՀՀՇ վարչության որոշ անդամներ փաստեցին, որ կուսակցության մեջ ազդեցության ոլորտների եւ հեղինակության ճշգրտման խնդիր է դրված, կուսակցական հեղինակությունների վերագնահատում՝ իշխանափոխության եւ ստանձնած պատասխանատվության ընդառաջ: Հատկանշական է, որ Բաբկեն Արարքցյանը չի մասնակցել քվեարկությանը: «Հանրապետություն» խմբակցության նախագահի դառնալուց հետո, վերլուծաբանների կարծիքով, Բաբկեն Արարքցյան-Վանո Սիրադեղյան մրցակցությունը պետք է ավելի ընդգծվեր, սակայն ՀՀՇ-ին մերձ աղբյուրները **«Ազգին»** հայտնեցին, որ մրցակցությունը շատ ավելի լուրջ եւ բարձր մակարդակում է. ՀՀՇ-ն պատրաստվում է տեղ ազատել Լեւոն Տեր-Պետրոսյանի վերադարձի համար՝ դեպի ակտիվ քաղաքական կյանք: Անցած շաբաթ ՀՀՇ վարչության մեծամասնությունը զորակցեց Վանո Սիրադեղյանին: Քավության նոխազի որոնումը, սակայն, օրակարգում է. երեկ, կարծես, ի հավաստումն վարչության իրենց նախագահի հանդեպ ունեցած պատասխանատվության, խորհրդարանում էին ՀՀՇ վարչության երիտասարդ ոչ պատգամավոր անդամներից Անդրանիկ Հովակիմյանը, Արարատ Զուրաբյանը...

Ն. Գ.

Համագործակցության նիստում հրատապ հարցեր

Երեկ Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության Հանրապետական վարչության կենտրոնական գրասենյակում տեղի ունեցավ «Արդարություն եւ միասնություն» համագործակցության հիմնադիր անդամ կազմակերպությունների հերթական նիստը, որի ընթացքում քննարկվեցին մի շարք հարցեր:

Մտքերի փոխանակություն ծավալվեց մասնավորապես նախագահական ընտրություններից հետո ներքաղաքական զարգացումների, իշխանությունների կողմից վարվող կադրային քաղաքականության, ՀՀ Ազգային ժողովում ՀՀ ընտրական օրենսգրքի երեք նախագծերի շուրջը տեղի ունեցող քննարկումների, ինչպես նաեւ Քաղաքական խորհրդի ստեղծման վերաբերյալ:

Քննարկվեցին նաեւ ՀՀ նախագահի հետ «Արդարություն եւ միասնություն» համագործակցության առաջիկա հանդիպմանը առնչվող հարցեր:

ՀՌԱԿ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Շամիրամ Աղաբեկյանը նշանակվել է «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթի գլխավոր խմբագիր

ԵՐԵՎԱՆ, 11 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ինչպես «Ռեսպուբլիկա Արմենիա» պաշտոնաթերթի խմբագրությունում տեղեկացրին «Նոյյան տապանի» թղթակցին, թերթի գլխավոր խմբագիր է նշանակվել Շամիրամ Աղաբեկյանը: Շամիրամ Աղաբեկյանը Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության անդամ է, վերջին շրջանում «Ազգ»-ի լրագրող, մեկնաբան, երկար ժամանակ աշխատել է «Գոլոս Արմենիի» թերթի գլխավոր խմբագրի տեղակալ:

Էռնեստ Սողոմոնյանը՝ հնչակների առաջնորդ

ԱԺ պատգամավոր, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության անդամ Էռնեստ Սողոմոնյանը վերադարձել է դեռեւս նախանցյալ շաբաթ Բեյրութում սկսված հնչակյան համաժողովից, ուր որոշում է կայացվել Հայաստանի Հնչակյան կուսակցության ցկյանս ընտրված նախագահ Եղիա Նաճարյանին փոխարինելու մասին: Կուսակցական այս տեղաշարժն ակնկալվում էր վաղուց: Այսօր Հայաստանի պետական ատյաններում հաստատվել է արհեստավարժությունը, ուստի կուսակցությունները եւս համալրվում են նոր արհեստավարժ առաջնորդներով: Համաձայն հավաստի աղբյուրների Էռնեստ Սողոմոնյանը կգլխավորի Հնչակյան կուսակցությունը Հայաստանում:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՀՀ նորընծա կառավարությունը ներկայացրեց իր ծրագիրը

Համապատասխան իր խոստմանը՝ ՀՀ նորընծա կառավարությունն Արմեն Դարբինյանի գլխավորությամբ երեկ Ազգային ժողովին ներկայացրեց իր ծրագիրը: Երկուշաբթի 10:00-ից սկսյալ մինչեւ այսօր 10:00 պատգամավորները կպատրաստվեն «գրոհելու» կառավարության ծրագիրը: «Գրոհը» կբացվի այսօր: Ծրագրի հիմնարար 3 սկզբունքները հանրահայտ են. քաղաքական ոլորտում՝ ժողովրդավարական հասարակարգ, տնտեսական ոլորտում՝ ազատականացում, մասնավոր սեփականության՝ որպես տնտեսական հարաբերություններում անկյունաքարային սկզբունքի հաստատում, սոցիալական ոլորտում՝ սոցիալական պաշտպանվածության նվազագույն անհրաժեշտ մակարդակի ապահովում: Մոռացված չէ նաեւ հայեցի կրթական եւ մշակութային արժեքների վերարտադրության զարգացումը: Այս ամենը կարգախոսների լեզվով, իսկ մակրոտնտեսական գերակայությունները հստակ են. «կայունությունից դեպի տնտեսական աճ»՝ ՀՆԱ տարեկան 6 տոկոսից ավելի իրական աճով, 10 տոկոս սղաճի պայմաններում: Կառավարությունը նպատակամետ է մոտակա տարիներին ապահովել մեկ շնչին ՀՆԱ մինչեւ 1000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար:

Սեփականաշնորհման միջոցով կառավարությունը նախատեսում է գալիք հնգամյակում մասնավոր ուղղակի ներդրումների ծավալը դարձնել մինչեւ 600 մլրդ դրամ, գուցե ավելի: Հնգամյակներից դուրս՝ այսօրվա կտրվածքով. «Կառավարությունը չի ընդունի սակագների հետ կապված անհիմն պոպուլիստական մեղադրանքներն ու շահարկումները՝ կասկածի տակ դնելով պետականության, պետության տնտեսական հզորության ու անկախության համար բախտորոշ նշանակություն ունեցող ոլորտների վերարտադրության հարցը» (իմա՝ էլեկտրաէներգիայի, ջրի եւ այլ կոմունալ կենցաղային վճարներն ու ծառայությունների սակագները կշարունակեն ազատականացվել հետայսու եւս):

Ն. Գ.

ՇՐՋԱՆ

Բորիս Բերեզովսկին այսօր է ժամանելու Երեւան

ԵՐԵՎԱՆ, 11 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մայիսի 12-ին Երեւան կժամանի ԱՊՀ գործադիր քարտուղար Բորիս Բերեզովսկին: Այս մասին «Նոյյան տապանի» թղթակցին հայտնեցին ՀՀ ԱԳՆ հասարակայնության հետ հարաբերությունների վարչությունից: Ըստ նույն աղբյուրի, նախատեսված են Բորիս Բերեզովսկու հանդիպումները ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ ՀՀ վարչապետ Արմեն Դարբինյանի հետ:

Շեւարդնաձեն նախաձեռնում է այսրկովկասյան գագաթաժողովներ

ԹԲԻԼԻՍԻ, 11 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ: Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն մտադիր է մի շարք հանդիպումներ անցկացնել կովկասյան հանրապետությունների ղեկավարների հետ, ինչի մասին նա այսօր հայտարարել է ազգային ռադիոյին տված հարցազրույցի ժամանակ: Շեւարդնաձեն նշել է, որ նպատակահարմար է համարում Վրաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի եռակողմ գագաթաժողովների անցկացումը, որոնք «կարեւոր են ծագող հիմնախնդիրների եւ անդրկովկասյան պետությունների համագործակցության հարցերի քննարկման տեսակետից»:

ԱԴՐԲԵՋԱՆ

Մայիսի 16-ին համանախագահները կժամանեն Բաքու

75-ամյակին Ալիեւն իր երազած նվերը չստացավ

ԲԱՔՈՒ, 11 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մայիսի 16-ին Բաքու կժամանեն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները: Այս մասին ANS-press գործակալությանը տված հարցազրույցի ժամանակ հաղորդել է արտաքին քաղաքական հարցերի Ադրբեջանի պետխորհրդական Վաֆա Գուլուզադեն: Նա հաստատել է Ադրբեջանի դիրքորոշումը ղարաբաղյան հակամարտության փուլային լուծման վերաբերյալ. սկզբնապես ազատվում են 6 շրջանները, վերականգնվում են հաղորդակցությունները, այնուհետեւ որոշ ժամանակ անց լուծվում են մնացած բոլոր հարցերը:

Ի պատասխան ANS-press-ի այն հարցի, թե «կարո՞ղ է, արդյոք, Դաշնակցությունը, որ Ռոբերտ Քոչարյանի իշխանության գալուց հետո լեգալացրել է իր գործունեությունը, խանգարել հակամարտության կարգավորմանը», Վ. Գուլուզադեն նշել է, որ ամեն դեպքում հարցը կլուծվի խաղաղ ճանապարհով: Նա հայտարարել է, որ Հայաստանն այլ ելք չունի, քան լուծել այդ խնդիրները եւ խաղաղ ապրել, եւ զարգացող գործընթացները միտված են այդ ուղղությամբ:

Մյուս կողմից, Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի հետ հանդիպման ժամանակ Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը մայիսի 10-ին հայտարարեց, որ հիմնական խողովակաշարն անցնելու է Վրաստանի տարածքով դեպի Ջեյհան: Ղազախստանում կայանալիք տարածաշրջանային տնտեսական համագործակցության կազմակերպության հանդիպմանն ուղեւորվող Դեմիրելը երեք ժամով հատուկ կանգ էր առել Բաքվում Ալիեւի 75-ամյակը անձամբ շնորհավորելու նպատակով: Բաքվի «Բինա» օդակայանում կայացած հանդիպման ժամանակ Ալիեւը հայտարարեց, որ իր 75-ամյակի լավագույն նվերը կլինեն իր երկրի կորցրած տարածքների վերադարձը:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Արագեղեցիկների եւ Շամիրամի մրցամարտն ավարտվեց քրիստոնեա-դեմոկրատների հաղթանակով

Երբ անցած շաբաթը նշանավորվեց կառավարության կազմում այրականության սկզբունքի վերջնական հաստատումով, ապա այս երկուշաբթին Ազգային ժողովում ապացուցեց, որ ՀՀ եւ գործադիր եւ օրենսդիր իշխանությունները միակամ են «ոչ մի պաշտոն կանանց» խնդրում։ ԱԺ կրթության, գիտության, մշակույթի եւ երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի ընտրությունները եզրափակիչ մտան մեկ կին՝ Գայանե Սարուխանյան («Շամիրամ») եւ մեկ այր՝ Արամ Մկրտչյան (ՔԴՄ) թեկնածություններով։ Ջեմմա Անանյանը («Երկրապահ») ծրագրային ելույթից հետո ինքնաբացարկ հայտնեց հույս հայտնելով, որ «Շամիրամը չի նվաճել հայ արագեղեցիկներին»։ ԱԺ 137 արագեղեցիկները (իմա պատգամավորները) 77 «կողմ», 66 ձայնով ԱԺ կրթության, գիտության եւ մշակույթի հանձնաժողովի նախագահ ընտրեցին նույն հանձնաժողովի գործուն անդամ Արամ Մկրտչյանին։ Գայանե Սարուխանյանը հավաքել էր 42 «կողմ», 95 «դեմ»։ Փաստենք, որ ուժերի նման դասավորությունը կանխատեսելի էր. «Երկրապահը» հրաժարվեց պաշտոնապես պաշտպանել Գայանե Սարուխանյանի թեկնածությունը, թեեւ անցած ճեպազրույցում «Երկրապահ» պատգամավորական խմբի նախագահ Սմբատ Այվազյանը հայտնել էր իրենց աջակցությունը Գայանե Սարուխանյանի առաջադրմանը։ Բայց երկուշաբթի թե Ալբերտ Բազեյանը, թե Սմբատ Այվազյանը ճշտեցին, որ խմբում չձեւավորվեց միանշանակ մոտեցում, ուստի խումբը գնաց ազատ քվեարկության։ Եվս մեկ նրբերանգ. Արամ Մկրտչյանին ամենաջերմ շնորհավորողները «Շամիրամ» խմբակցության անդամուհիներն էին։ Ամալյա Պետրոսյանն ի պատասխան իմ հարցի, թե ինչո՞ւ իրենք չպաշտպանեցին իրենց իսկ խմբակցության նախագահին, դիվանագիտորեն ժպտաց. «Մենք նրան չենք առաջադրել, եթե առաջադրեինք, այլ հարց»։ Այսպիսով կառավարությունն ունի կրթության ՀՅԴ անդամ նախարար, իսկ ԱԺ-ն նույնանուն հանձնաժողովի ՔԴՄ անդամ նախագահ։ Մաղթում ենք նրանց արդյունավետ գործունեություն։

Բնակարանների սեփականաշնորհումը մինչեւ 1998 թ. դեկտեմբերի 31-ը

ՀՀ ԱԺ սոցիալական ապահովության, առողջապահության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գեղամ Ղարիբջանյանը Ազգային ժողովին երրորդ ընթերցմամբ ներկայացրեց «Պետական, հանրային եւ համայնքային բնակարանային ֆոնդի մասնավորեցման մասին» օրենքի նախագիծը։ Մինչ այսօր ՀՀ-ում սեփականաշնորհված չէ բնակֆոնդի 25 տոկոսը. 1997 թ. հուլիսի 1-ից հետո բազմաթիվ հապաղումներ տեղի ունեցան, եւ շատ քաղաքացիներ անկարող եղան սեփականաշնորհել իրենց օթեւանները։ Ուստի Գեղամ Ղարիբջանյանը կոչ արեց մեր բնակիչներին օգտվել պահի առիթից եւ մինչեւ 98 թ. դեկտեմբերի 31-ը մասնավորեցնել իրենց բնակության տարածքը։ Ցանկացած քաշքշուկի եւ արհեստական խոչընդոտների դեպքում Գեղամ Ղարիբջանյանն առաջարկեց դիմել իր հանձնաժողովին։ Քվեարկությունը երեւան բերեց հետաքրքիր հանգամանք. 89 «կողմ», 13 «դեմ», 18 «ձեռնպահ» ձայներով նախագիծն ընդունվեց։ Իսկ դեմ, ձեռնպահ կամ չքվեարկած պատգամավորների շարքում, բացառյալ կոմկուսի ֆրակցիան (ըստ ամենայնի, կոմունիստներն ընդհանրապես դեմ են որեւիցե մասնավոր սեփականության՝ լինի բնակարան, թե գործարան), շատ էին քաղաքապետարանների եւ համայնքների ղեկավար աշխատողները։ Չար լեզուները շշնջում էին, թե նախագիծը ձախողելու քաղաքապետարանների որոշ աշխատակիցների եռանդուն գործունեությունը զարտուղի ճանապարհներով ի համապատասխան գումարներով ուշացած քաղաքացիներին սեփականատեր դարձնելու։



Հողի սեփականաշնորհումը շարունակվելու է

ՀՀ տնտեսական եւ կառուցվածքային բարեփոխումների նախարար Վահրամ Ավանեսյանը Ազգային ժողովին ներկայացրեց ռազմավարական նշանակության մի օրինագիծ՝ «Պետական սեփականություն համարվող հողերի մասնավորեցման պետական կարգը»։ 93 թ.-ից հողի սեփականաշնորհումը Հայաստանում դադարեցվեց, եւ նախարարի համոզմամբ, ստեղծվել է անորոշ, թերակատար վիճակ։ Կան բազմաթիվ գյուղատնտեսական, արդյունաբերական եւ այլ նշանակության հողեր, բնակավայրեր, որոնք դեռեւս պետությանն են պատկանում եւ տնտեսական շրջանառության մեջ ներգրավված չեն։ Օրինագծի երրորդ հոդվածն ամրագրում է, որ պետական սեփականություն համարվող հողերը կարող են օտարվել վաճառքի, անհատույց փոխանցման եւ փոխանակության միջոցով։

Օրինագիծն առաջ բերեց բուռն կրքեր։ Ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի հանձնաժողովի նախագահ Արմեն Եղիազարյանը իբրեւ հարակից զեկուցող, ընդհանրացրեց. «Նույն սեփականաշնորհումն է շարունակվելու, որ ժամանակին կատարեցինք հողը բաժանելով գյուղացիներին»։ Այսինքն Ա ասելուց հետո կառավարությունը մտադիր է ասել Բ եւ Գ։ Ամենակրքոտ ընդդիմադիրները, ինչպես միշտ, կոմունիստներն էին։ Լեռնիկ Հակոբյանը, թեեւ ընդունեց այս օրենքի կարեւորությունը, այնուհանդերձ առաջարկեց. «Ընկերներ, հանգիստ եղեք, ինչ ծախսեցինք, բավական է, աշխատենք հանգիստ պայմաններում եւ ավելի կատարելագործված»։ Այն պնդումը, թե վաճառելու այլ բան չկա, եւ մնացած հողն են վաճառում բյուջե գումարներ բերելու համար, մնաց առկախ, որովհետեւ կառավարությունը չէր ներկայացրել ճշգրիտ հաշվարկ, որքան գումար բյուջե մուտք կարվի պետական սեփականություն համարվող հիշյալ հողերի օտարումից։ Պետաիրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանը նշեց նախագծի եւս մեկ թերություն. այնտեղ ութ անգամ վկայակոչված է կառավարությունը, որի ընդունած որոշումները կարգավորելու են օրենքի գործունեությունը։ Այսպես կառավարության կարգով է որոշվելու, թե ո՞ւմ ինչ հողեր են անհատույց տրվելու, որո՞նք են աճուրդի հանվելու, ինչպե՞ս է անցկացվելու այդ աճուրդը։ Պատգամավորը վկայաբերեց վարկերի նախադեպը. երբ ԱԺ-ն սկսում է քննադատել վարկերի կիրառման արդյունավետությունը, նրանց պատասխանում են. վարկերի պայմանագրերը դուք եք ընդունել, դուք էլ պատասխանատու եք։

Հետագա սխալներից խուսափելու, իսկ այդպիսիք սեփականաշնորհման ոլորտում քաջածանոթ են, օրինագիծն առավել կատարյալ տեսնելու միտումով ԱԺ-ն հետ վերադարձրեց հողերի օտարման կարգի նախագիծը կառավարություն։ Այս եռօրյան ակնկալում է զուտ արհեստավարժություն կառավարության տնտեսական գործունեության ծրագրի հաստատում, վերահսկիչ պալատի հաշվետվություն, մաքսային եւ հարկային բարեփոխումներ։

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

«Երկրապահին» հարող շրջանակները կստեղծեն կուսակցություն

ԱԺ «Երկրապահ» խմբակցության նորընտիր ղեկավար Սմբատ Այվազյանը օրերս հրապարակավ նշեց, թե «Երկրապահը» պատրաստվում է կուսակցություն ստեղծել, հերքելով այն պնդումները, որ կամավորականների այս միությունը հավատարիմ է հասարակական բարեգործական ուղղվածություն ունեցող կազմակերպություն լինելու իր սկզբունքին։ ԱԺ փոխխոսնակ, «Երկրապահ» կամավորական միության փոխնախագահ Ալբերտ Բազեյանը, որը միեւնույն ժամանակ ԱԺ համանուն պատգամավորական խմբի ղեկավար է, ի պատասխան «Ազգի» հարցին պարզաբանեց. «Ոչ թե «Երկրապահը» [illegible] կուսակցություն, մենք ստեղծում ենք [illegible] լինելու զբաղվել միմիայն խաղաղական գործունեությամբ, եւ մեր կազմակերպությանը բնորոշ սոցիալական, բարեգործական խնդիրները մնալու են մի կողմ։ Մեր գաղափարը այսօր կուսակցություն ստեղծելը չէ. «Երկրապահ» կամավորականների միությունը միանշանակ եղել է եւ մնում է հասարակական կազմակերպություն։ Այլ հարց է, եթե «Երկրապահին» հարող ուժեր ստեղծեն որեւէ քաղաքական կուսակցություն»։ Ծագեց երկրորդ հարցը. նոր Ազգային ժողովի ընտրություններում բացի մեծամասնական տեղերից հավակնելով, «Երկրապահը» այսպիսով կհավակնի՞ նաեւ համամասնական ցուցակ մտնել, դրանով իսկ նոր խորհրդարանում ձեւավորել ավելի հզոր մեծամասնություն։ [illegible] նախադրյալ, որին Բազեյանը պատասխանեց առավել խուսափողական. «Ցանկացած ընտրություններից առաջ «Երկրապահ» կամավորական միությունը որպես սոցիալական հենարան, ընտրազանգված, հանդես կգա իր դիրքորոշմամբ։ Տարբեր, [illegible] բեւեռային [illegible] եւ մենք կորոշենք, թե ում պետք է պաշտպանել»։ Ենթադրելի է, որ Ազգային ժողովի «Երկրապահ» խմբի անդամները [illegible] կդառնան նորաստեղծ «Երկրապահին» կուսակցության հիմնադիրը՝ գուցե նույնանուն, գուցե անվանափոխված։

Ն. Դ.

Համիկ Խաչատրյանը՝ ԱԺ հասարակայնության հետ կապերի վարչության պետ

ԱԺ մամուլի ծառայությունը վերակազմավորվեց։ Բարձրացավ ոչ միայն ծառայության նախկին ղեկավար Վահագն Մկրտչյանի կարգավիճակը՝ նա դարձավ ԱԺ խոսնակ Խոսրով Հարությունյանի խորհրդական, այլեւ իր նախկինում ղեկավարած կառույցի կարգավիճակը։ Այսուհետեւ ԱԺ-ում կգործի հասարակայնության հետ կապերի վարչությունը, որը ղեկավարելու է Համիկ Խաչատրյանը։ Նա Ազգային ժողովում աշխատելու փորձառություն ունի, իսկ մինչեւ վերջերս աշխատում էր վարչապետ Արմեն Դարբինյանի մամուլի գրասենյակում։

ՄԱՐԶԵՐ

Հորդառատ անձրեւ եւ կարկուտ Արագածոտնում

ԱՇՏԱՐԱԿ, 11 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ։ Մայիսի 9-ի երեկոյան, ժամը 21.00-ի եւ լույս 10-ի գիշերը, ժամը 03.00-ի սահմաններում հորդառատ անձրեւ եւ կարկուտ է տեղացել Արագածոտնի մարզում։

Ինչպես հայտնեցին Արագածոտնի մարզպետարանի լրատվության բաժնից, առանձնապես խոշոր չափի, մոտավորապես ձվի մեծության հասնող կարկուտը, լուրջ վնասներ է պատճառել Ափնա, Ուշի, Փարպի, Ղազարավան, Բազմաղբյուր, Բյուրական եւ մոտակա գյուղերին։ Տուժել են ցանքատարածությունները, այգիները, վնասվել են ջերմոցներ, ավտոմեքենաներ, եղել են մարդկանց ուշաթափության դեպքեր։ Անգամ տարեցները չեն հիշում նման մեծություն ու ձեւ ունեցող կարկտային տեղումներ։

Տարերքի հետեւանքներն ուսումնասիրում, վնասների չափը ճշտում է ստեղծված հանձնաժողովը։ Նկատի առնելով բնական աղետներից տուժած հողի սեփականատերերի վնասները մեղմելու դիմաց հատուցում կազմակերպելու մասին կառավարության ընդունած վերջին որոշումը, այս կարկտահարությունից տուժած բնակիչները կառավարության կողմից ակնկալում են որոշակի փոխհատուցում։

Սեւանին առնվազն 3 մետր է պետք

ԵՐԵՎԱՆ, 11 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ։ Եթե Սեւանի մակարդակը չբարձրացվի գոնե 3 մետրով, ապա կշարունակվի լճի կանաչակալումը։ Այս եզրակացությանն են հանգել ազգային եւ միջազգային փորձագետները սեմինարների վերլուծության հիման վրա, որը կազմակերպվել է Սեւանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման պլանի պատրաստմանը նվիրված ծրագրի շրջանակում։ [illegible] Համաշխարհային բանկի [illegible] այդ նպատակի համար հատկացվել է 485 հազ. դոլարի չափով վարկ։

Սահմանամերձ 11443 հեկտար չի մշակվում

«ԵՐԵՎԱՆ», 11 ՄԱՅԻՍ։ Տավուշի մարզպետարանի գյուղբաժնի տվյալներով մարզի սահմանամերձ 24 բնակավայրերում չի մշակվում 5148 հա վարելահող, 1209 հա խաղողի, 1068 հա պտղատու այգի, չի հնձվում 891 հա խոտհարք եւ չի օգտագործվում 3127 հա արոտավայր։ Ադրբեջանական ռմբակոծությունների հետեւանքով շարքից դուրս են եկել սահմանամերձ 4 ջրհան կայաններ, որի հետեւանքով չի ոռոգվում 6386 հա հողատարածք։ Սահմանամերձ գոտում գտնվող խաղողի եւ պտղատու այգիները վերջին տարիներին չմշակվելով, դադարել են այգի լինելուց։ Կառավարությունը դեռեւս որոշում էր ընդունել 1995 թ. եւ հետագա տարիների համար սահմանամերձ չմշակվող տարածքների հողի հարկից ազատելու վերաբերյալ։

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է [illegible]
Հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010 Հանրապետության 47
ֆաքս 562941 AT&T (3742) 151065
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ / հեռ. 521635
Խմբագիր ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲՅԱՆ / հեռ. 529221
Տեղեկություն / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային սարքավորումը «Ազգ» թերթի
Ցրումը «Ազգի» [illegible] է
Նյութերը չեն գրախոսվում ու չեն վերադարձվում։
«AZG» DAILY NEWSPAPER
Editor H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ԼՂՀ

Շուշիի ազատագրումը սկիզբ էր նոր փիլիսոփայության

Ինչպես տեղեկացվել է մեր նախորդ համարում, Շուշիի ազատագրման 6-րդ եւ ֆաշիզմի նկատմամբ հաղթանակի 53-րդ տարեդարձների կապակցությամբ Ստեփանակերտ ժամանեցին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը, «Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրենի պաշտոնակատար Րաֆֆի Հովհաննիսյանը, պաշտոնատար այլ անձինք: Նրանք մայիսի 9-ին, ԼՂՀ ղեկավարության ներկայացուցիչների հետ մեկտեղ, ծաղկեպսակ դրեցին Ստեփանակերտի հուշահամալիրում գտնվող տանկ-կոթողի պատվանդանին: Արարողությանը մասնակցում էին նաեւ արտասահմանյան բազմաթիվ հյուրեր, այդ թվում Արցախի անդավաճան բարեկամ, բարոնուհի Քերոլայն Քոքսը: ԼՂՀ հասարակայնության ներկայացուցիչներ ՀՀ պաշտոնական պատվիրակությունը մասնակցեց նաեւ տոնակատարություններին:

«Շուշիի ազատագրումը պատմական եւ ռազմավարական անհրաժեշտություն էր», «Ազգի» թղթակցին ասաց անվանի գրող եւ հրապարակախոս Զորի Բալայանը: «1992-ին մենք պետք է լուծեինք կրկնակի խնդիր. նախ ու առաջինը Շուշիի պաշտպանական ամրակայանը, որը լուծվեց Ստեփանակերտի համար ամենածանր բեռնատու կրակակետը: Առանց Շուշիի ազատագրման անհնարին կլիներ Հայաստան-Արցախ աշխարհագրական կապի հաստատումը: Միաժամանակ մայիսի 9-ը պատմության մեջ կմտնի նաեւ որպես ԼՂՀ զինված ուժերի ստեղծման օր: Տարանջատ գործող ֆիդայական ջոկատներից ձեւավորվեց ու բազմաթիվ մարտերում առանձնացավ հայկական կանոնավոր բանակը: Այսօր վեցամյա փոքր բարձունքից մենք երեւի ինչպես հարկն է չենք ըմբռնում իրողությունը: Մեծությունը երեւում է հեռվից: Վեց դար հետո համոզված եմ, վերլուծաբանները ըստ արժանվույն կգնահատեն այս իրադարձությունը: Հայազգի մարդն ի վերջո ոչ միայն ձերբազատվեց զոհի սինդրոմից, ոչ միայն իր մեջ սպանեց ստրուկին, այլեւ գիտակցեց իր ուժը՝ անհրաժեշտության դեպքում դարավոր թշնամուն կործանարար հակահարված հասցնելու կարողությունը: Այդ իմաստով Շուշին թերեւս նոր փիլիսոփայության սկիզբն էր»:

Անդրադառնալով ճգնաժամի կարգավորման խնդրին, Զորի Բալայանը կարեւորեց նաեւ այն հանգամանքը, որ արդեն չորրորդ տարին հակամարտության գոտում պահպանվում է զինադադարը: «Միջազգային հանրությունը պետք է գիտակցի, որ հրադադարի մասին պայմանագիրը իրագործվում է այն պատճառով, որ վավերացված է նաեւ ԼՂՀ ներկայացուցչի կողմից: Միջնորդները հավանաբար հասկանում են, որ առանց ԼՂՀ հավանության որեւէ պայմանագիր ի սկզբանե դատապարտված է ձախողման»:

Շուշիի ազատագրման 6-րդ տարեդարձը համընկավ նաեւ շուշեցի հայտնի օդաչու, ԽՍՀՄ կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի 85-ամյակին: Զորի Բալայանի տեղեկատվությամբ, ադրբեջանցիների կողմից ջարդված Ստեփանյանի կիսանդրու տեղը մոտ ժամանակներս կտեղադրվի հերոսի նոր հուշարձանը:

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ,
Ստեփանակերտ

Լրացավ զինադադարի 4-րդ տարին

Այսօր մայիսի 12-ին, լրանում է ղարաբաղյան հակամարտության գոտում պահպանվող զինադադարի 4-րդ տարին: Ուղիղ 4 տարի առաջ ՌԴ-ի միջնորդությամբ եւ ՀՀ պաշտպանության նախարարի ներկայությամբ, ԼՂՀ եւ Ադրբեջանի պաշտպանության նախարարների միջեւ ստորագրվեց հրադադարի վերաբերյալ մի փաստաթուղթ, որի կարեւորությունը, ղարաբաղյան դիտորդների կարծիքով, դժվար է թերագնահատել: Ըստ նրանց, հիշյալ փաստաթուղթը, ցավոք, ոչ թե Ադրբեջանի քաղաքական վերնախավի բարի կամքի, այլ ադրբեջանական բանակի ջախջախիչ պարտությունների եւ տարածաշրջանում հաստատված ռազմաքաղաքական հավասարակշռության արդյունք էր: ԼՂՀ-ում համոզված են, որ քառամյա զինադադարը մեկ անգամ եւս ապացուցում է այն ճշմարտությունը, որ խաղաղությունը տարածաշրջանում հաստատվում է միայն Ադրբեջանից ԼՂՀ անկախացման դեպքում: Պատերազմական գործողությունները եւ երկու ժողովուրդների միջեւ արյունահեղ բախումները որպես կանոն վերսկսվում են միայն ԼՂ-ն Ադրբեջանին ենթարկելու փորձերից հետո: ԼՂՀ քաղաքական փորձագետները հույս են հայտնում, որ միջնորդ կողմերը՝ ԱՄՆ-ը, Ֆրանսիան եւ Ռուսաստանը գիտակցում են այս ճշմարտությունը եւ ըստ այդմ էլ կնպաստեն հակամարտության վերջնական կարգավորմանը:

Վ. Ա.

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ

Անհամբերություն

Այնքան երկար ենք սպասել փոփոխությունների, այնքան տեւականորեն ենք դառնացել հանրապետության ներքաղաքական կյանքի խեղաթյուրումներից, հասարակական կենսագործունեության բոլոր ոլորտներն ախտահարած անարդարություններից եւ ապօրինություններից, որ իշխանության վերջերս տեղի ունեցած փոփոխությունից հետո անհամբերությամբ սպասում ենք կտրուկ բարելավումների: Մոռանալով, որ երկրի նոր նախագահի պաշտոնավարությունից հազիվ մեկ ամիս է անցել, չարախոսները չարախնդում են, իբր՝ ոչինչ չի փոխվել եւ չի փոխվելու, հույսով սպասողները ոչ թե օրեցօր, այլ ժամառժամ կորցնում են հույսը: Հասկանալ կարելի է. նախորդ վարչակարգի պարտադրած կաղապարներից ձերբազատվելու տենչը մեծ է եւ ամեն անցնող օր դար է թվում: Բայց արդյո՞ք փոփոխություններն արդեն իսկ տեսանելի չեն: Արդյո՞ք Նախագահ Քոչարյանի առաջին իսկ քայլերը չեն վկայում ազգային համաձայնության հասնելու, երկրում գործող քաղաքական ուժերին ավելի շատ տեղ տալու, նրանց ունկնդրելու պատրաստակամության մասին: Թերահավատը էական չհամարելով, որ նոր նախագահը վարում է կադրերի ընտրության շատ յուրահատուկ գիծ, կարող է մակերեսորեն հարցը հանգեցնել ընտրարշավի ժամանակ սատարած ուժերին «պաշտոններ բաժանելու» կամ ինչ-որ կերպ «հատուցելու» էժանագին մտայնության: Չգիտես ինչու, երբ նույն կերպ վարվում էր նախկին նախագահը, ոչ մեկին «դատապարտելի» չէր թվում: Իսկ ահա այն, որ Քոչարյանը նախարարական աթոռներ է տվել Դաշնակցությանը, որ վերացրել է այդ կուսակցության գործունեության կասեցումը, որ բանտերից ազատ է արձակել նախորդ ռեժիմի ժամանակ քաղաքական հետապնդումների ենթարկված գործիչներին, իր անձնական խորհրդականներ է նշանակել նախկինում ընդդիմադիր կուսակցությունների ղեկավարների (Վահան Հովհաննիսյան, Պարույր Հայրիկյան, Արամ Սարգսյան) դիտվում է իբրեւ մի ինչ-որ «անթույլատրելի» բան: Ինչո՞ւ, ո՞ր տրամաբանությամբ՝ անհայտ է: Եվ ապա՝ Մի՞թե Քոչարյանը վատ է անում, որ իրեն շրջապատում է հայաստանյան քաղաքական ներկապնակի որքան հնարավոր է շատ «գույներով»: Անձամբ ես դրա մեջ հակված եմ տեսնելու պետական խոհեմություն: Հարցն ամենեւին որեւէ մեկին «փոխհատուցելու» մեջ չէ, այլ քաղաքական ավելի ընդգրկուն հենարանով պետական կառույցներ ձեւավորելու մեջ, ինչը ավելի ամուր կդարձնի այդ կառույցները:

Նայենք մեր արտաքին քաղաքականությանը: Ո՞րն է այդ քաղաքականության գերխնդիրը: Արցախի հիմնահարցը: Անցած մեկ ամսում նախագահն ու նրա նշանակած նոր կառավարությունը հաջողությո՞ւն ունեցե՞լ են այս աշխարհի հզորներին համոզելու Արցախյան հիմնահարցի քաղաքական կարգավորման մեր նոր մոտեցումները: Ունեցել են: Քոչարյանն անձամբ այդ արել է Մոսկվայում, Ելցինի եւ Ալիեւի հետ իր հանդիպումների ժամանակ, արտգործնախարար Օսկանյանը նույնն է արել Գերմանիա կատարած այցի ընթացքին: Եվ ի՞նչ. երկուսն էլ կարողացել են լսելի դարձնել Հայաստանի ձայնը, համենայն դեպս՝ նրանց ամենայն հարգանքով ունկնդրել են, միանգամից հակահարված չեն տվել, խոստացել են կշռադատել լսածը, իմաստավորել մեր փաստարկներն ու առարկությունները: Դժվար է ասել, թե հետագան ինչպիսին կլինի, սակայն ակնհայտ է, որ Հայաստանը թոթափել է նախապես արդեն պարտվածի դիրքերից հանդես գալու բարդույթը, շտկել է մեջքը, պատրաստվում է բանակցությունների նոր փուլին ներկայանալ ավելի արժանապատիվ կեցվածքով:

Կամաց-կամաց առողջանում է երկրի բարոյահոգեբանական մթնոլորտը: Ութ տարի շարունակ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ղեկավարությունը ուրանում էր Հայրենական մեծ պատերազմը՝ անարգելով այդ պատերազմում զոհված հարյուրհազարավորների հիշատակը եւ խոցելով վետերանների հոգիները, նրանց անվանելով սոսկ «երկրորդ աշխարհամարտի վետերաններ»: Նախագահ Քոչարյանը ուղղեց նաեւ այդ հրեշավոր սխալը՝ անցած պատերազմն անվանելով «հայրենական», դրանով իսկ, համոզված եմ, սկիզբ դնելով ՀՀՇ-ի կողմից հանիրավի ոտնահարված իսկապես անանց արժեքների վերարժեւորմանը: Քոչարյանով սկսվում է անցյալի հախուռն թքակոծման, պատմության ցավագին իրողությունների եւ հատկապես Հայ դատի ուրացման կամ շրջանցման, շատ այլ մերժելի երեւույթների վերջը: Եվ այդ ամենը՝ մեկ ամսում: Քիչ չէ, որքան էլ մենք շտապում ենք: Համոզված եմ, մոտ ապագայում նախագահը հանդես կգա անցյալ ութ տարիների քաղաքական հավասարակշռված գնահատմամբ, լավին լավ կասի, վատին՝ վատ, ինչպես խոստացել էր նախընտրական շրջանում: Բայց չէ՞ որ քաղաքական գնահատական տալու համար էլ ժամանակ է պետք, որովհետեւ չի կարելի, որ նոր նախագահը, կրկնելով նախորդի սխալը, ելնի ու ժողովրդի առաջ անպատասխանատու կերպով սեւացնի այն ամենը, ինչ եղել է... իրենից առաջ: Կարծում եմ, Ռոբերտ Քոչարյանը հասկանում է, որ հայոց պատմությունը իրենով չի սկսվել եւ իրենով չի ավարտվելու: Սակայն ուզում եմ նրան նորից հիշեցնել, որ դիմանալու ուժ չի մնացել, թող նաեւ շտապի...

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Ինտերնյուսի» «Խաչմերուկները»

Մարտի 17-ից ամեն երեքշաբթի երեկոյան, հայկական տարածաշրջանային 12 հեռուստաընկերություններ եթեր են հեռարձակում «Խաչմերուկ» լրատվական ծրագիրը»: Հաղորդումը, որ պատրաստվում է Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի անկախ հեռուստաընկերությունների համատեղ ջանքերով, պատմում է միայն այս 3 հանրապետությունների մասին, այստեղ խաչվում, հատվում են 3 հանրապետություններում տիրող մեծ ու փոքր իրադարձությունները:

Նման ծրագիր հիմնելու գաղափարը ծնվեց 1994 թ-ին, երբ Թբիլիսիում հավաքվեցին երեք հանրապետությունների անկախ հեռուստաընկերությունների տնօրենները ու հեռուստալրագրողները: Եւ արտահայտված գաղափարների [illegible] խաչմերուկում հայտնվեց «Խաչմերուկ»-ը: Ինչքան էլ ոգեւորիչ էր նորությունների փոխանակման հիման վրա ստեղծված ծրագիր ունենալու որոշումը, այնուամենայնիվ թերահավատություն էր նկատելի ադրբեջանցի եւ հայ լրագրողների մեջ: Հիմնական տարաձայնությունները կապված էին թեմաների ընտրության հետ. դժվար էր պատկերացնել, որ իրար դեմ պատերազմող երկու երկրներից իրար հաջորդող լուրեր միեւնույն լինեին մի միասնական ծրագրում: Բայց եւ այնպես, փոխադարձ համաձայնություն ստեղծվեց, քանի որ բոլորի նպատակը մեկն էր՝ իրար պատմել այն ամենի մասին, ինչով ապրում, ուրախանում, վշտանում է յուրաքանչյուր հանրապետության բնակիչ: «Խաչմերուկ»-ը «Ինտերնյուս Եվրոպայի» եւ անդրկովկասյան 3 հանրապետությունների ինտերնյուսյան գրասենյակների համատեղ արտադրությունն է: Այն ֆինանսավորվում է Եվրամիության Տասիս ժողովրդավարության ծրագրի կողմից: Մոտ 10 «Խաչմերուկ» է եթեր հեռարձակվել 3 հանրապետություններում: Հայաստանում այն ցուցադրում են 12 ոչ պետական հեռուստաընկերություններ, այդ թվում Ա1+, Գյումրիի, Նոր Հաճընի, Վանաձորի, Արմավիրի եւ այլ շրջանների հեռուստաընկերությունները:

Ծրագիրը ռուսալեզու է, արդեն մեծ լսարան ունի: Ծրագրի իրականացմամբ զբաղվողները հույս են հայտնում, որ շուտով նրանց կմիանան Աբխազիայի եւ Հարավային Օսիայի լրագրողները: «Մենք փոխադարձ տեղեկություններ ենք ուզում իմանալ մեր հարեւանց՝ հեռուստաէկրանից», ասվում է հաղորդումներից մեկում:

«Խաչմերուկ»-ը ոչ միայն փաստում, հաղորդում է նորություններ՝ դրանով ստեղծելով արհեստավարժ հեռուստատեսություն, այլեւ զերծ լինելով որեւէ քաղաքական երանգավորումից ու մեկնաբանություններից, փորձում է խաղաղության ու բարեկամության դրոշակ պարզել 3 հանրապետությունների խաչմերուկում:

ՄԵՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հելսինկյան կոմիտեի 3-րդ տեղեկագիրը

Հայաստանի հելսինկյան կոմիտեն լույս է ընծայել իր երրորդ տեղեկագիրը, որի էջերում տպագրված վեց հրապարակումները վերաբերում են մեր հանրապետությունում, մասնավորապես 1998-ի հունվար-փետրվար ամիսներին արձանագրված մարդու իրավունքների եւ ազատությունների խնդրին առնչվող իրավիճակին: Ազգային փոքրամասնությունների հարցը տեղեկագրում արտացոլված է Վահան Իշխանյանի «Եզդիները անհանդուրժողականության գոտում» հոդվածով, որում տեղ գտած փաստերն ահազանգող եւ աղաղակող իմաստ են կրում: Ընդ որում, նույն այդ փաստերն արձանագրվում են «Նեղ կենցաղում», այսպես ասած, խիստ տեղայնացված բնույթի եւ իրենց այլանդակ դրսեւորումներով անհասանելի են «գործին կցված մարմինների ականջներին»:

Բացի այդ, տեղեկագրում հրապարակված այլ հոդվածները (Նորիկ Եղիազարյան, Ավետիք Իշխանյան, Լուսինե Սահակյան, ինչպես նաեւ այլ հեղինակներից մեջբերումներ), իրավական լույսի ներքո են առնում հանրապետությունում առկա հասարակական կազմակերպությունների, քաղաքական դատավարությունների, ինչպես նաեւ անմեղության կանխավարկածի գաղափարների համակարգում գործող, մեղմ ասած, խորդուբորդությունները:

Հիշեցնենք, որ Հայաստանի հելսինկյան կոմիտեն հիմնադրվել եւ գործում է 1995-ից եւ իր գործունեության նպատակներից է տեսնում՝

ա) աջակցել միջազգային համաձայնագրերի իրականացմանը,

բ) նպաստել ժողովուրդների, ազգությունների եւ էթնիկական խմբերի մերձեցմանն ու բարեկամությանը,

գ) օժանդակել մարդկության ընտանիքի կողմից չընդունված խորթ եւ անհարիր երեւույթների դեմ տարվող պայքարին,

դ) իրականացնել իրավապաշտպան գործունեություն,

ե) պայքարել պատերազմների, բռնությունների եւ նման այլ դրսեւորումների դեմ...

Ա. Պ.

պետականություն

Սահմանադրական փոփոխությունների ուրվականը կարծես թե հանգրվանում է Հայաստանում

Սկիզբը էջ 1

Անարդյունավետ են դարձնում մի համակարգ, որը ժողովրդավարական պետության համար կարևորագույն, բացառիկ ոլորտներից մեկն է։ Դրա հետ մեկտեղ, թերություններով հանդերձ, այս Սահմանադրությունը վճռական դեր խաղաց մեր պետության կյանքում։ Սահմանադրությունը իր ոչ միայն կարգավորիչ, այլ նաև կայունացուցիչ դերը, ըստ էության, խաղաց ու խաղալու է մեր հասարակության մեջ։ Եվ եթե մենք քայլ ենք անում դեպի առաջ, ապա ոչ թե ժխտելով, մերժելով, այլ հակառակը, կատարյալ դարձնելով մեր Սահմանադրությունը, ավելի ներդաշնակ հասարակական հարաբերությունների բնույթին, օբյեկտիվ օրինաչափություններին, որ սահմանադրական նորմ-սկզբունքներով, նորմ-նպատակներով ու կարգավորիչ նորմերի միջոցով մեր հասարակությանը դինամիկ զարգացման լիցք հաղորդվի։

Այնպես որ, կա փոփոխությունների անհրաժեշտությունը, բայց այդ փոփոխությունները պետք է իրականացվեն լրջորեն, ծանր ու թեթև անելով յուրաքանչյուր հարցադրում և առաջարկություն։ Հենց այդ նպատակն են հետապնդում, մասնավորապես, ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի հրավիրած սեմինարները։ Մենք գտնում ենք, որ առաջին հերթին այս հարցը մասնագիտական լսարանում քննության առարկա պետք է լինի. քաղաքագետների, սահմանադրական իրավունքի մասնագետների, իրավաբանների, քաղաքական գործիչների։ Մասնագիտական լսարանի քննության արդյունքներով հետագա քննարկումները կգնան արդյունավետ ճանապարհով։

– Համաձայն ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի տարբեր առիթներով արված հայտարարությունների, սրբագրման կարիք ունեն Սահմանադրության այն դրույթները, որոնք կանոնակարգում են իշխանության երեք թևերի իրավասություններն ու փոխհարաբերությունները, ՀՀ նախագահի կարգավիճակը, ՀՀ նախագահ-կառավարություն գործառնական կապը... Որո՞նք են ձեր մոտեցումները։

– Շեշտեմ 2 կարևոր հանգամանք։ Սահմանադրությունն այն բացառիկ փաստաթուղթն է, որով հստակեցվում է իշխանության բնույթը, հասարակական հարաբերությունների բնույթը, պետության տիպը, հստակեցվում է իշխանության գործառնական ոլորտը և առանձին մարմինների լիազորությունների հավասարակշիռը։ Որքա՞ն է դա ապահովված Սահմանադրությամբ։ Դրանից հետո առաջանում է երկրորդ հարցը՝ որքա՞ն է դրա կայունությունն ապահովված։

Ահա, այս 2 հարցերի պատասխանով մենք կարող ենք նաև անմիջականորեն կարծիք կազմել հասարակության զարգացման օրինաչափությունների, դինամիզմի, հնարավոր հակասությունների հաղթահարման հնարավորությունների կամ միջոցների մասին։

Ես նույնպես գտնում եմ, որ Սահմանադրության մեջ իշխանությունների տարանջատման և հավասարակշռման հարցում անելիքներ կան, մանավանդ զսպումների և հակակշիռների մեխանիզմն ավելի գործուն և ամուր դարձնելու հարցում։ Այստեղ խոսքը վերաբերում է «ՀՀ նախագահ և գործադիր իշխանություն» ամբողջ համակարգի փոխհարաբերությանը, «Նախագահ-վարչապետ», «Նախագահ և Ազգային ժողով», «Նախագահ և դատական համակարգ» հարաբերություններին։

Մեր ոլորտի վերաբերյալ կասեմ հետևյալը, ինչը, ի դեպ, բազմիցս ակնարկել եմ և մենագրություններում, և մամուլում։ Շատերը չգիտեն և չեն պատկերացնում (բնական է, նոր համակարգ է. սահմանադրական արդարադատությունը նոր երևույթ է), բայց մարդկությունը այս բնագավառում հասել է արժեքների որոշակի ամրագրման, որոնք ընդունվում են որպես սկզբունքներ և նույնիսկ կասկածի ենթակա չեն միջազգային մակարդակով։ Աշխարհի շուրջ 100 երկրներում սահմանադրական դատարանների մեծ մասն ունի մի շարք լիազորություններ՝ սահմանադրության մեկնաբանություն, իշխանությունների միջև լիազորությունների հարցում առաջացած վեճերի լուծում, մարդու իրավունքներին առնչվող նորմատիվ ակտերի կոնկրետ վերահսկողություն և այլն, որը չունի մեր Սահմանադրական դատարանը։ Բայց սա չէ գլխավոր խնդիրը։ Այս մարմինը ունի լիազորություններ, որոնց իրականացման հնարավորությունը արհեստականորեն սահմանափակված է։ ՀՀ Սահմանադրական դատարանը գործում է 2 տարի, սակայն 2 դիմում է եղել օրենքի սահմանադրականության առումով։ Ի՞նչ է, մեզ մոտ ամեն ինչ այդքան բարվոք վիճակո՞ւմ է, որ դիմելու անհրաժեշտություն չկա։ Անհրաժեշտությունը կա, բայց դիմելու հնարավորության սահմանափակման հետևանքով դատարանն իր առաքելությունը լիարժեք չի կարողանում իրականացնել։

Այս հարցերը պետք է իրենց լուծումը ստանան սահմանադրորեն, մասնավորապես, ընդհանուր իրավասության դատարան և Սահմանադրական դատարան հարաբերությունների, դատարանների անկախության ապահովման երաշխիքների ամրագրումով Սահմանադրության մեջ։

Բայց կա նաև մի սկզբունքային հարց. արդյոք ամե՞ն ինչ պետք է ամրագրել Սահմանադրության մեջ, ժամանակի ընթացքում փոփոխելու պայմանով, թե մտածենք Սահմանադրությունը բեռնաթափելու մասին և պառլամենտի դերը բարձրացնելով որոշ խնդիրներ փորձենք լուծել նաև սահմանադրական օրենքի շրջանակներում։

Հայաստանը բացառիկ երկրներից է, ուր խորհրդարանը որակյալ մեծամասնությամբ սահմանադրական օրենք ընդունելու իրավասությունից սահմանադրությամբ զրկված է։ Մենք սահմանադրական օրենքներ կամ, ինչպես ասում են, օրգանական օրենքներ, չենք ընդունում, և փորձել ենք հիմնական սկզբունքային խնդիրների լուծումը տեղափոխել Սահմանադրություն, մնացածները լուծել սովորական օրենքներով։

– Կարծում եմ, որ այդ առումով Ազգային ժողովի կարգավիճակն էլ սահմանադրորեն պետք է վերանայվի։ Սահմանադրական օրենքներ ընդունելու համար օրենսդիր իշխանությունը պետք է իրոք համապատասխանի նման առաքելությանը...

– Այո, ես համամիտ եմ ձեզ հետ, խորհրդարանի դերը մենք չպետք է տեսնենք օրենք դաջելու մեջ։ Հակառակը, կայունության առաջին երաշխիքը պետք է լինի հենց պառլամենտը, և պառլամենտը պետք է կարողանա լիարժեքորեն իրականացնել ոչ միայն օրենսդիր, այլ նաև իր վերահսկիչ ֆունկցիան։

Մենք խիստ սահմանափակել ենք ԱԺ դերը և օրենսդրական գործունեության մեջ։ Զրկելով որակյալ մեծամասնությամբ օրենքներ ընդունելու իրավասությունից թուլացրել ենք ԱԺ ներազդեցուցիչ դերը հենց օրենսդրական գործունեության ոլորտի վրա։ Սա մեկ։ Երկրորդը, մենք սահմանափակել ենք ԱԺ վերահսկիչ դերը, հանգեցնելով այն չորեքշաբթի օրերին ԱԺ-կառավարություն հարց ու պատասխաններին, որոնք ավելի շատ ձևական բնույթ են կրում։ Մենք զրկել ենք խորհրդարանը պառլամենտական լսումների հնարավորությունից, երբ հիմնարար ձևով հարցը քննության առարկա է դարձվում և պատասխան է պահանջվում այն պատասխանատուից, որը հարցի ուղղությամբ որոշակի գործադիր ֆունկցիա է իրականացնում։

Այս բոլոր հարցերը չափազանց բարդ են ու չափազանց կարևոր, և մենք Սահմանադրության ամեն մի բաժնի, ամեն մի գլխի վերաբերյալ առանձին սեմինար ենք կազմակերպում, թեմա առ թեմա, գլուխ առ գլուխ։ Մայիսի վերջին ես հրավիրել եմ Հայաստան մի քանի խոշոր մասնագետների նաև դրսից. Վենետիկի հանձնաժողովի 2 անդամներ, Լատվիայի Սահմանադրական դատարանի նախագահին, Իտալիայի Տրիեստի համալսարանի պրոֆեսոր Բարյոլեին և Վաշինգտոնի համալսարանից պրոֆ. Շվարցին, որոնք ՀՀ Սահմանադրությանը քաջատեղյակ և ծանոթ մարդիկ են։ Սեմինարների արդյունքներով քննարկումներն ավարտվելու են, որից հետո նյութերը կտրամադրենք պետական այն մարմիններին, որոնք իրավասու կլինեն հարցին հետագա զարգացում տալ։ Հավանաբար նախագահը կստեղծի ինչ-որ հանձնաժողով, որը աշխատանքային կարգով կնախապատրաստի պառլամենտական, քաղաքական քննարկումներ։ Մեր անելիքը ես շատ համեստ եմ գնահատում։ Սա միայն մասնագիտական որոշակի մոտեցման դրսևորում է և օգնություն, որպեսզի հետագա քննարկումների ժամանակ հաշվի առնվի նաև այսպիսի կարծիք։

– Ըստ ձեզ, ե՞րբ կավարտվի «սահմանադրական» գործընթացը և սահմանադրությունը սրբագրելու ո՞ր քաղաքակիրթ եղանակն է նախընտրելի։

– Ես այն կարծիքն ունեմ, որ սկզբունքորեն այստեղ անճապարել չի կարելի։ Եթե փորձենք փոփոխություն անել հանուն փոփոխության, առաջնորդվելով որքան շուտ այնքան լավ սկզբունքով, վաղը անհրաժեշտություն կլինի արդեն այդ սխալները շտկելու։ Ես ենթադրում եմ, որ առնվազն մի քանի ամիս սահմանադրական նոր գործընթացը պետք է շարունակվի։

– Իսկ ներկա պառլամենտը կհասցնի՞ իր դիրքորոշումն արտահայտել։

– Եթե արդյունավետ աշխատանք կազմակերպվի, թերևս կարող է հասցնել։ Սակայն սա այն հարցն է, որը կարող է քննարկման առարկա դառնալ տարբեր շահագրգռություններից և տարբեր ցանկություններ հարուցելու նպատակներից ելնելով։ Որպեսզի հարցը խիստ քաղաքականացվածությունից տեղափոխվի քաղաքական իրավական հարթություն, մասնագիտական հարթություն, արդեն իսկ նախապատրաստվում են որոշակի նյութեր, ինչը կարող է ձերբազատել ավելորդ ծայրահեղությունների մեջ ընկնելու գայթակղությունից։ Հետագայում ինչպես կգնան քննարկումները կախված է և նախագահի դիրքորոշումից, և պառլամենտի դիրքորոշումից։

– Որպես պետական գործիչ, տարբերվում եք դասական պահվածքով ու աշխատաոճով, ես կասեի, պահպանողական կեցվածքի պաշտոնյա եք։ Կարո՞ղ եմ արդյոք ձեր խառնվածքին վերագրել այն հանգամանքը, որ գերադասեցիք ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը գործադիր իշխանության ղեկավարի պաշտոնից։ Կարծես թե այսպիսի լուր էր պտտվում...

– Ձեր հարցի մեջ շատ լուրջ և ինձ համար հոգեհարազատ մի շեշտադրում կա։

Իմ կարծիքով, պետության կառուցման և պետական շինարարության յուրաքանչյուր քայլ պետք է արվի մեր տաճարների շինարարության հոգեբանությամբ։ Մի քանի տասնյակ տարի առաջ մտածում էին, որ 80-ական թվականներին կոմունիզմ է լինելու, իսկ շենքերը կառուցում էին 25 տարվա պայմանով։ Պարզվեց, որ դեռ երկար տարիներ մարդիկ ավելի լավ շենքերում չեն ապրի։ Իսկ մեր պապերը, եթե կառուցում էին մի բան, կառուցում էին դարերի համար, սերունդների համար։ Պետությունը չի կարելի ժամանակավորի հոգեբանությամբ կառուցել, այդպիսի պետությունը ամուր հիմքեր չունի։ Սա մեկ, և երկրորդ՝ պետության կառուցումը, պետության ամրացումը, ինստիտուցիոնալ ամբողջ համակարգի ձևավորումը պահանջում է առաջին հերթին համակարգային մոտեցում։ Հասարակական հարաբերություններում միագործոն մոտեցումը հաջորդ իսկ վայրկյանին և հաջորդ պահին ակնհայտ ցույց է տալու սխալը։ Այս տեսանկյունից, երբ ես գնահատում եմ այսօրվա խնդիրները, համարում եմ, որ սահմանադրական կարգերի ամրապնդումը, օրենսդրական դաշտի հստակեցումը, սահմանադրական արդարադատությունը որպես ժողովրդավար պետության անկյունաքարային կառույց դարձնելը, կամ որպես անկյունաքար նրա հիմքում դնելը ավելի կարևոր խնդիր է, քան ցանկացած այլ խնդրի լուծում։

– Խոսելով Սահմանադրության ու նրա որոշ դրույթների սրբագրման անհրաժեշտության մասին, չեմ կարող անտեսել և Սահմանադրական դատարանը, զգալով, որ նրա կարգավիճակն էլ անթերի չէ։ Մյուս կողմից, ԱԺ նախագահ Խոսրով Հարությունյանը, «Ազգի» հարցազրույցի ընթացքում խոսելով սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտության մասին, իր մոտեցումներն արտահայտեց նաև Սահմանադրական դատարանի առումով։ Պարզվեց, որ անգամ պետություն-քաղաքացի հարաբերությունները իրավունքների ու պարտականությունների առումով պետք է որ Սահմանադրական դատարանի քննությանը արժանանան։

– Ես կուզեի շեշտել, այսպես կոչված, հասարակական ընկալումը։ Դա ունի երկու կողմ, երկու աստառ։ Առաջինը, ցանկացած նոր երևույթ պահանջում է որոշակի ժամանակ ճանաչման, ընկալման ու գնահատման համար։ Չկա երկիր, ուր մեկ տարում կարողանան հասկանալ և ճիշտ գնահատել Սահմանադրական դատարանի առաքելությունը, ինչի պատճառով ծնվում են այսպես կոչված չհիմնավորված ակնկալիքներ և անարդարացի դժգոհություն։

Երկրորդը՝ շահարկումն է։ Ցանկացած դատարանում լինում է երկու կողմ, և ցանկացած դատավճռից մի կողմը գոհ է, մյուս կողմը՝ դժգոհ։ Եվ ցանկացած դժգոհ փորձում է ոչ թե դժգոհության պատճառը փնտրել իր մեջ, այլ իրենից դուրս, փորձում է գտնել քավության նոխազ։ Այսպիսի հոգեբանությունը շարունակականություն է ունենալու անգամ այն երկրներում, որտեղ Սահմանադրությունը ստեղծվել է 40-ական թվականներից առաջ, իսկ Սահմանադրական դատարանը 45 թ-ից հետո։ Դա չի կարևորը, հարկավոր է տարանջատել քաղաքականն ու տեսականը, մտացածինն ու հիմնականը և տեսնել խնդիրն իր բովանդակության մեջ. ինչի՞ է կոչված Սահմանադրական դատարանը, լիարժե՞ք է նրա գործունեությունը, կոչմանը համապատասխան, թե՞ ոչ։ Կարող եմ ասել, որ մեր Սահմանադրական դատարանն ի վիճակի է լիարժեքորեն իրականացնելու Սահմանադրական արդարադատության իր առաքելությունը։ Դա վկայում է և մեր ներուժը, և մեր հարաբերությունները տարբեր երկրների դատարանների հետ, և միջազգային վարկանիշը։ Այս երկու տարվա ընթացքում նախկին Խորհրդային Միության ընդամենը 5 պետություն, այդ թվում նաև Հայաստանը դարձել է Եվրոպայի Սահմանադրական դատարանների կոնֆերանսի դիտորդ անդամ։ Կազմակերպել ենք երկու միջազգային սեմինար, որին մասնակցել են 17-ից ավելի երկրների պատվիրակություններ, այդ թվում նաև 10 երկրների Սահմանադրական դատարանների նախագահներ կամ տեղակալներ։ Միջազգային վեց սեմինարներում հանդես ենք եկել զեկուցումներով, որոնք բավականին բարձր են գնահատվել։

Բայց այս բոլորի հետ մեկտեղ, ես գտնում եմ, որ Սահմանադրական արդարադատության բնագավառում մենք մեր առաքելությունն իրականացնում ենք անբավարար, որովհետև կոչված ենք մի բանի, որի իրականացումից արհեստականորեն զրկված ենք նույն սահմանադրությամբ և նույն օրենքներով։ Ամեն օր Սահմանադրական դատարանը քաղաքացիներից ստանում է հարյուրավոր նամակներ։ Ես մեկ առ մեկ ծանոթանում եմ բոլոր նամակներին, սակայն ստիպված եմ լինում հասցեագրել տարբեր կազմակերպություններին, որպեսզի կարողանանք ինչ-ինչ ձևով դրանց ընթացք տալ։ Ցավով եմ արձանագրում, որ շատ հարցադրումներ սահմանադրական արդարադատության ոլորտի խնդիրներ են, և իրավասության ճիշտ լուծումների պարագաներում կարող էին այստեղ քննարկման և լուծման առարկա դառնալ։

Ցանկացած այդպիսի վերահասցեագրում առաջացնում է վերաբերմունք։ Եթե քաղաքացին խորապես համոզված է, որ ինքը բարձրացնում է սահմանադրական արդարության հարց, իսկ հարցը չի քննարկվում, նրան չի հետաքրքրում ինչո՞ւ է այդպես։ Այդպես է, որովհետև մենք ստեղծելով փակել ենք խողովակները և ստացվել է, որ քաղաքացին չի դիմում, դատավորը չի դիմում, նախագահը օրենքի սահմանադրականության հարցով չի դիմում, պառլամենտի պատգամավորները պետք է 65 ստորագրություն հավաքեն նոր դիմեն։

Մենք այսօր զբաղված ենք միջազգային պայմանագրերի սահմանադրականության գնահատմամբ։ Լիարժե՞ք է այս գործառույթը, որպեսզի մարդիկ կարողանան պատկերացում ստեղծել ՀՀ Սահմանադրական դատարանի իրավասությունների մասին։

Սահմանադրական դատարանը չպետք է դիտել զուտ որպես ընտրությունների ժամանակ այս կամ այն ձևով մասնակցություն ապահովող ինստիտուտ։ Սա Սահմանադրական դատարանի ածանցված ֆունկցիան է։ Հիմնական ֆունկցիան՝ օրենքի սահմանադրական խնդիրն է, լիազորությունների հարցով վեճերի լուծման խնդիրն է, սահմանադրության մեկնաբանության խնդիրն է, լիարժեք սահմանադրական արդարադատություն իրականացնելն է։

Այնպես որ, խնդրի լուծումը կապված է ոչ միայն իրավասությունների, այլ նաև նրանց իրացման հնարավորությունների մեջ, Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն ամբողջական, կենսունակ համակարգ դարձնելու մեջ։

Հարցազրույցը վարեց
ՇԱՄԻՐԱՄ ԱՂԱԲԵԿՅԱՆԸ

միջազգային

ՓԱՐԻԶ

Միջազգային դատարանն ընդդեմ ցեղասպանությունների

Առաջարկում է ֆրանսիացի բժիշկը

Այսօր անհրաժեշտ է ստեղծել համաշխարհային մասշտաբով մշտապես գործող միջազգային քրեական դատարան, որը ազգությունից անկախ կդատի այն անհատներին, որոնք մեղադրվում են ցեղասպանության եւ մարդկության դեմ հանցագործությունների մեջ, ուր էլ դրանք գործած լինեն: Նման առաջարկությամբ այստեղ հանդես է եկել «Մեդսան դյու մոնդ» («Աշխարհի բժիշկներ») ֆրանսիական հասարակական կազմակերպության ղեկավար Ժակ Մամուն: «Ֆիգարո» օրաթերթում տպագրված հոդվածում նա գրում է, որ պատահական չէ այն փաստը, որ Ֆրանսիան մտադիր է հաղորդել մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 50-ամյակի տոնակատարությանը: Մասնավորապես, գտնում է կազմակերպության ղեկավարը, հասարակական բանավեճի բացակայությունը Ֆրանսիայի կառավարությանը թույլ է տալիս որեւէ կերպ չհիմնավորել իր երկիմաստ դիրքորոշումը նման դատարանի ստեղծման վերաբերյալ: Հեղինակի կարծիքով, լռությունն ու զգուշությունը, ըստ էության, թաքցնում են մերժողական վերաբերմունքն այդ հարցի նկատմամբ: Նման դատարանի ստեղծումը կնշանակի այնպիսի անկախ քրեական արդարադատության ստեղծում, որը գեղեցիկ մի օր կարող է հաշիվ պահանջել պետություններից. ինչպես նաեւ բանավեճ սկսել, որն այս կամ այն երկրի իշխանություններին կստիպի բացատրություններ տալ իրենց դիրքորոշման վերաբերյալ: Դոկտոր Ժակ Մամուն գտնում է, որ միջազգային քրեական դատարանի շուրջ մտքերի փոխանակությունը չպիտի սահմանափակվի բարձրաստիճան ատյանների անաղմուկ միջանցքներով: Հունիսի 15-ին Հռոմում աշխատանքն է սկսում միջազգային դիվանագիտական խորհրդաժողովը, որը կվճռի այդ դատարանի հարցը: Ժամն է համախմբվելու, կոչ է անում «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպության ղեկավարը:

Ցեղասպանություններն ու մարդկության դեմ հանցագործությունները ժամանակակից խորդուբորդ պատմության ուղենիշներն են, գրում է հեղինակը: Այդ ճանապարհին միշտ գիշեր է ու մշուշ, քանի որ պետություններն անտարբեր են դրանց նկատմամբ: Մնում են առանց դամբանաքարի թաղված զոհերի եղբայրական գերեզմանները, ծերերի լուռ դեմքերով հոսող արցունքներն ու երեխաների անդամալույծ մարմինների վերքերը: Մնում են նրանք, ովքեր զսպում են զայրույթը, եւ նրանք, որոնց սրտերն ընդմիշտ արյունահոսում են: Մնում է մի քանի անուն, որոնցից փշաքաղվում ես. Օսվենցիմ, Սրեբրենիցա...

Բախվելով մարդկության դեմ գործած հանցագործություններին ու ցեղասպանությունների չարիքին, բժիշկները հաճախ հանդիպում են վերապրածներին, որոնք իրենց մեղավոր են զգում կենդանի մնալու համար: Պատահում է, այդ մարդիկ իրենց են վերագրում պատասխանատվությունն իրենց իսկ վերապրած ողբերգության համար: Ուրեմն գտնում է Ժ. Մամուն, ապաքինումը հնարավոր չէ առանց արդարության, քանի որ զոհը նաեւ սպասում է խորհրդանշական հատուցման, որը բժիշկն անկարող է մատուցել:

Արդարադատությունն է, որ պիտի հաստատի հաստատումը: Այլապես զոհը պարփակվում է իր դեպրեսիայի մեջ, զոհ դարձած բազմությունը կդիմի վրեժի փոխհատուցում ստանալու համար, շարունակում է բժիշկը: Հնարավոր է, որ զոհից նրանք դառնան դահիճ՝ պարփակվելով դժոխային շրջանակի մեջ, ուր զավակները կկրեն մարտիրոսի կամ հայրերի սխալների բեռը: Այստեղ է, որ հարձակվողն ու հարձակման ենթարկվածը խառնվում են միմյանց, գրում է Ժ. Մամուն:

Պայքարել անպատժելիության դեմ. սա է բռնությունների զոհերի բուժման միակ բանալին, եզրակացնում է հոդվածագիրը: Դա նշանակում է, որ արդարությունը ոչ միայն պիտի արտասանվի, այլեւ իրականացվի, եւ դա չափազանց կարեւոր է ոչ միայն կենդանի մնացածների համար, այլեւ որպեսզի մի ամբողջ ժողովուրդ չկրի զանգվածային սպանության պատասխանատվությունը: Միայն իրավաբանական գործընթացը թույլ կտա տարանջատել դահիճին անմեղից, պարտադրել փոխհատուցումը: Նույնիսկ եթե խորհրդանշական բնույթ կկրի: Դա կլինի նաեւ ժողովուրդների հիշողության հիմնարար տարր եւ անցյալը մերժելու դեմ պայքարելու ամենահզոր գործիքը, վստահ է հեղինակը:

Ցավոք, ֆրանսիական ոչ կառավարական կազմակերպության ղեկավարի հոդվածում խոսք անգամ չկա Մեծ եղեռնի մասին: Սակայն անուամենայնիվ նրա առաջարկությունը չափազանց հետաքրքիր է ու կարեւոր: Սպասենք, թե ինչ արձագանք կստանա այս հրապարակումը Ֆրանսիայում եւ ինչո՞ւ չէ Հայաստանում:

ՏԻԳՐԱՆ ԼԵԼՈՅԱՆ,
Փարիզ
ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակից
«Ազգի» համար

Կրասնոդար. Հայուհին մինչեւ իր մահը պահպանեց զոհվածների շիրիմները

56 տարի առաջ Կրասնոդարի երկրամասի Գորյաչեկլյուչեւսկայի շրջանում ահեղ մարտեր էին ընթանում: Կարմիր բանակի զորամասերը դիմակայում էին Տուապսեի նավթային շրջաններն ամեն գնով գրավելու հրաման ստացած գերմանացիներին:

Պողնավիսլոյի տեղանքում անհամար էին զոհվածներն ու վիրավորները: Այդ մարտերի մասնակիցների եւ ականատեսների թիվը խիստ սահմանափակ է, եւ բոլոր նրանք, ովքեր հանգչում են Գորյաչեկլյուչեւյան հողում, չեն մոռացվել շնորհիվ մի հայ կնոջ, որի համբավը վերածվել է լեգենդի: Արշալույս Գեւորգի Հաջիյանը պատերազմից հետո, 56 տարի մշտապես բնակվում էր անտառի համեստ խրճիթում, պահպանելով այդտեղից չհեռանալու երդումը, որ նա տվել էր զոհված մարտիկներին, որոնց մեծ մասին խնամել եւ ճանաչում էր:

Հաջիյանների տանը տեղավորված էր դաշտային բուժմասը, ուր շարունակ բերում էին վիրավորներին ու թաղում ծառերի տակ, որտեղ գիշեր-ցերեկ լսվում էին մարդկանց հառաչանքները, բժիշկներն ու բուժքույրերը ոչ քուն ունեին, ոչ դադար: Հաջիյանների ողջ ընտանիքը զբաղվում էր վիրավորներով՝ մայրը ժողովրդական բժիշկ էր, հայրը որս էր անում եւ սնունդ հայթայթում, իսկ «Շուրոչկան»՝ այդպես էին անվանում նրան զինվորները, նրանց ամենահաս խնամակալն էր:

Գերմանացիներն այդպես էլ չկարողացան գրավել կարեւոր ռազմական կարեւոր նշանակություն ունեցող կիրճը, չնայած գրավել էին շրջակա Ֆանագորիսկոյե ավանը:

Իրենց մահվանից առաջ ծնողները նրան արգելում են միայնակ մնալ այստեղ, իսկ նա ծնողներին թաղելով տան բակում, հավասարիմ իր երդմանը մնաց անտառում: Գարնանից մինչեւ աշուն շատերն են այցելում այստեղ՝ հարազատների, ընկերների շիրիմներին, գալիս են որսորդներ, զբոսաշրջիկներ, իր հարազատները, տեղի հայ համայնքի, մոտակա զորամասի, երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Իսկ ձմռանը, երբ ճանապարհները չորս կողմից փակվում են, հեռավոր կիրճում, անտառի իր տնակում Արշալույս մորաքույրը մնում էր մեն-մենակ, քամու եւ գայլերի ոռնոցի ընկերակցությամբ, ու ձմռան երկար գիշերներին շարունակ հիշում ու վերհիշում էր այն օրերը, հարյուրավոր անգամներ նայելով ու վերադասավորելով այդ օրերի արդեն խունացած լուսանկարները, զինվորներից մնացած մասունքները:

Տարիներ առաջ որոշում են կիրճում, որտեղ գերեզմաններն են, լիճ կառուցել: Նրան առաջարկում են բնակարան քաղաքում, բայց նա հրաժարվում է՝ պատասխանելով, որ չի լքի իր համար սրբավայր դարձած վայրերը: Իսկ երբ ուղարկում են տրակտորներ՝ հարթեցման աշխատանքներ սկսելու համար, նրանց դիմավորում է հրացանային երկու նախազգուշական կրակոցներով (նա լավ նշանառու է եղել): Դրանից հետո եկան բոլորովին այլ մարդիկ եւ հուշարձան կառուցեցին:

Պատմելով նրա մասին եւ գնահատելով նրա մարդկային մեծ սխրանքը, դեկտեմբեր ամսին Կրասնոդարի «Վոլնայա Կուբան» թերթը դիմել էր ՌԴ նախագահին, որպեսզի Արշալույս մորաքույրն արժանանա նրա ուշադրությանը, նշելով, որ ողջ աշխարհը գիտե Մայր Թերեզային՝ նրա բարի սրտի եւ գործերի մասին, ժամանակն է ու հարկ է, որ աշխարհը իմանա իրենց լեգենդար հայրենակցի մասին:

Իսկ Կրասնոդարում հրատարակվող «Դամսկիե սլաբոստի» թերթի խմբագրությունն՝ ապավինելով իր բազմաթիվ ընթերցողների առաջարկներին՝ Արշալույս Հաջիյանին հայտարարել էր Կուբանի 1998 թ. կին, դրանով հազարավոր մարդկանց երախտագիտությունը հայտնելով մի սովորական կնոջ, Հաջիյանների ընտանիքի 12 զավակներից մեկին, որը ողջ կյանքը մնալով անտառում, հավասարիմ իր երդմանը, այդպես էլ չվայելեց ընտանեկան երջանկության քաղցրությունը՝ մնալով անտառի հավերժ հարսնացու:

Լեգենդար հայուհին՝ Արշալույս Հաջիյանը, մահկանացուն կնքեց անտառի իր տնակում, շուրջ մեկ ամիս առաջ՝ չապրելով հերթական հաղթանակի օրը: Նա գնաց, միացավ այն հազարավոր հերոսներին, որոնք տասնամյակներ եղել են նրա կյանքի անբաժանելի ուղեկիցը:

Նրան թաղել են տան բակում՝ ծնողների շիրիմների կողքին: Արշալույս Հաջիյանի կյանքում ամենաթանկ եւ հուզումնալից օրը մայիսի 9-ն էր՝ հաղթանակի օրը, երբ այնտեղ են գալիս բազմաթիվ մարդիկ, որպեսզի հարգանքի տուրք մատուցեն նրան եւ զոհվածների աճյուններին: Հաղթանակի օրը առաջին ծաղիկները դրվեցին նրա թարմ գերեզմանին:

ՏԻԳՐԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ,
Սփյուռքահայության հետ
կապերի կոմիտեի նախագահի
պաշտոնակատար

ՀԱՄԱՌՈՏ

ԱՄՆ-Իսրայել-Պաղեստին եռակողմ գագաթաժողովը հետաձգվում է

ԹԵԼ ԱՎԻՎ, 11 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կիրակի երեկոյան անարդյունք ավարտվեց ամերիկացի բանագնաց Դենիս Ռոսի եռօրյա այցը Իսրայել: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, վարչապետ Բենիամին Նաթանյահուի հետ կայացած երեք հանդիպման ընթացքում նրան չհաջողվեց Իսրայելի կառավարության ղեկավարին համոզել ընդունելու մերձավորարեւելյան հաշտության գործընթացի վերականգնման ամերիկյան պլանը: Բանակցությունների վերջին փուլի արդյունքների հիման վրա հայտարարվեց, որ ընթացիկ շաբաթ Վաշինգտոնում չի կայանա եռակողմ (ԱՄՆ-Իսրայել-Պաղեստին) գագաթաժողովը: Բանակցությունների մասնակիցները, ինչպես հաղորդեց Իսրայելի վարչապետի ներկայացուցիչ Դավիթ Բար-Իլանը, «մոտ օրերս կորոշվեն շփումները շարունակելու ուղիները»:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարն ավարտեց դժվարին շրջագայությունն Աֆրիկայի երկրներում

ՆԱՅՐՈԲԻ, 11 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանին չհաջողվեց իր կազմակերպության հասցեին ուղղված քննադատական արտահայտություններից խուսափել նաեւ աֆրիկյան շրջագայության վերջին փուլում: «Այստեղ՝ Աֆրիկայում, կցանկանայինք տեսնել ուրիշ ՄԱԿ, կիրակի օրը Էրիտրեայի մայրաքաղաքում՝ Ասմերայում, Կոֆի Անանի հետ համատեղ կայացած մամլո ասուլիսում բացեիբաց հայտարարեց այդ պետության նախագահ Իսայաս Աֆեւորկը: Ոչ այնպիսի ՄԱԿ, որը սխալներ է անում Սոմալիում, Ռուանդայում, գաղթականների խնդիրը լուծելիս, եւ ոչ էլ այնպիսի ՄԱԿ, որն այդ ամենի պատճառով խայտառակված է Աֆրիկայում»: Սակայն ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի համար ճամփորդության ամենատհաճ հատվածը դարձավ Ռուանդա այցելելը: Երկրի ղեկավարները ցուցադրական քամահրանքով վերաբերվեցին բարձրաստիճան հյուրի պատվին կազմակերպվող ընդունելությանը, իսկ խորհրդարանում ելույթ ունենալիս Կոֆի Անանն ստիպված էր խիստ կշտամբանքներ ու մեղադրանքներ լսել իր հասցեին: Դրանց էությունը հանգում է նրան, որ 1994 թվականին, պատասխանատու լինելով ՄԱԿ-ի խաղաղարար գործողությունների համար, ապագա գլխավոր քարտուղարը ոչ միայն չէր կարողացել, այլեւ գիտակցաբար չէր ցանկացել խանգարել ցեղասպանությանը Ռուանդայում, որի ժամանակ հութու ծայրահեղականները կես միլիոնից ավելի մարդ էին կոտորել:

Թայբեյը պատրաստվում է դիմագրավել «կոմունիստական ուժերի» հարձակումը

ՍՅԱՆԳԱՆ (ՀՈՆԿՈՆԳ), 11 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Տայվանում այսօր սկսված մարտական հրաձգություններով ընթացող զորավարժությունների ընթացքում փորձարկվում են հակաօդային պաշտպանության նոր համակարգեր եւ էլեկտրոնային զենք: Դրանց մասին հայտարարելով անցած շաբաթ, Թայբեյը՝ ի տարբերություն վերջին տարիների գործելակերպի, դրանց գլխավոր խնդիրը բնորոշել է որպես «կոմունիստական ուժերի հնարավոր ներխուժումը կասեցնելու գործողությունների լրամշակում»: Մինչդեռ, Պեկինից ստացված հաղորդումների համաձայն, Չինաստանի ժողովրդաազատագրական բանակը «հաջողությամբ փորձարկել է» «օդ-օդ» տիպի հրթիռներ ՉԺՀ-ի հյուսիս-արեւմուտքում՝ ռազմաօդային ուժերի Բադանցզիլինի ռազմահանգրվանում:

Էրդողանի դատապարտումը թուլացնում է թուրք իսլամիստներին

Ինչպես արդեն հաղորդվել է, Թուրքիայի անվտանգության դատարանը ապրիլի 21-ին 10 ամսվա բանտարկության դատապարտեց Ստամբուլի քաղաքագլուխ Ռեջեփ Թայիփ Էրդողանին, նրան մեղադրելով երկրի քաղաքացիական հաշտությանն սպառնացող ելույթների համար: Էրդողանի դատապարտումը վկայում է, որ երկրի իշխանություններն ուզում են ամեն կերպ թուլացնել իսլամիստների ազդեցությունը: Քանզի Էրդողանն այն մարդն է, որի հետ արմատականները մեծ հույսեր են կապում: 44-ամյա Էրդողանը բարեփոխիչ իսլամիստների նոր սերնդի ներկայացուցիչն է եւ համարվում է նախկին վարչապետ, 72-ամյա Նեջմեթթին Էրբաքանի ամենահավանական իրավահաջորդը: Մանավանդ որ այս տարվա փետրվարին Թուրքիայի սահմանադրական դատարանը Էրբաքանին 5 տարով զրկեց քաղաքականությամբ զբաղվելու իրավունքից:

Հանրային հարցումները վկայում են, որ Էրդողանն այսօր մեծ ժողովրդականություն է վայելում: Բայց նրա դատապարտումը վտանգում է գլխապտույտ վերելքով քաղաքական ասպարեզում հայտնված այդ գործչի ապագան, չնայած անվտանգության դատարանի վճիռը դեռեւս չի հաստատվել երկրի գերագույն դատարանում: Էրդողանը մեղադրվում է կրոնական ատելություն բորբոքելու մեջ: Անցյալ տարի նա մի հանրահավաքի առիթով անզգուշություն էր ունեցել մեջբերելու թուրք բանաստեղծներից մեկի հետեւյալ խոսքերը. «Մեր մզկիթները մեր զորանոցները, մեր մինարեթները մեր սվիններն են: Անհնար է լռեցնել աղոթքի կոչը»:

Թեեւ Ստամբուլի քաղաքագլուխը կարող է գանգատարկել դատավճիռը, բայց նրա դեմ կօգտագործվեն նաեւ այլ փաստեր: Ասում են, օրինակ, որ քաղաքապետարանը գովազդային խոշոր բյուջեներ է հատկացրել իսլամիստներին մոտ կանգնած հեռուստաալիքներից մեկին:

Թուրքական բանակը, որը 1997 թ. փետրվարին իսլամիստների արմատականությունը երկրին սպառնացող գլխավոր վտանգ հռչակեց, քրդերի ապստամբական շարժումը դասելով երկրորդ տեղում, մտադիր է սահմանադրությամբ իրեն տրված բոլոր միջոցները եւ քաղաքական կյանքում իր զբաղեցրած տեղն օգտագործել արմատականների ազդեցությունն արագորեն նվազեցնելու համար, նշում է «Էքսպրես» հանդեսը: Բանակի ղեկավարությունը չի ուզում ժամանակ կորցնել, քանի որ օրենսդրական արտահերթ ընտրությունները, ինչպես նաեւ տեղական ընտրությունները անցկացվելու են 1999 թ. մարտին:

«Աստղալից երկինքը մեր վրա է, բարոյական օրենքը՝ մեր մեջ»

Մամուլի, նիցշեագիտության եւ այլ «գիտության» մասին

«Օ՜, դժբախտություն. եկել է ամենաարհամարհելի մարդու ժամանակը...»
«Նայե՜ք, ես այժմ ցույց կտամ ձեզ վերջին մարդուն»:
Ֆրիդրիխ Նիցշե «Այսպես խոսեց Զրադաշտը»

«Այն, որ ամենքը կարող են սովորել կարդալ, կործանելու է ոչ միայն գրելը, այլեւ մտածողությունը», զգուշացրել է ժամանակին նույն ինքը Ֆրիդրիխ Նիցշեն: Սույն ճշմարիտ փիլիսոփայական եւ առավելապես բարոյական-էթիկական կանխադրույթի բուն իմաստը նկատի առնելով եւ վերափոխելով բառերն, իրավամբ կարելի է վավերել այն, որ «դեմոկրատական» մամուլը հայհոյագիր բարբաջանքները եւ ազատ-անկախ ժողովրդավարությունը որպես հոմանիշ, համազոր հասկացություն է ընկալում, կործանելու է ոչ միայն մամուլը, այլեւ ընթերցողին: Կործանելու է նաեւ այն պատճառով, որ վերջին «անուրանալի տասը տարիներին» եւ արդեն իսկ դրանցից հետո վրա հասած նոր ժամանակափուլում, հայ արդի մամուլում՝ հոգեւոր ազգային արժեքներին, մշակույթին, մտավորականությանը, արվեստագետին ցեխին հավասարեցնող կեղտաջրի լավան վարակված է նիհիլիզմի բացիլով:

Այլ հարց է, թե ո՞ւմ եւ ինչո՞ւ է դա հարկավոր: Նմանապես, այլ խնդիր է, թե քաղաքական նոր շրջափուլում մամուլը ուղեգրելո՞ւ է արդյոք դույզն-ինչ նոր ու բարձրաշունչ հավասար, թե իներցիայի տաղտուկ հոսքով շարունակելու է իր էջերում տարածել եւ բազմացնել ժխտողական մթամտության մանրէն:

Մեծապես արժանի է հիշատակման այն փաստը, որ ըստ գերմանացի գիտնական-փիլիսոփաների՝ Կ. Կրաուսի եւ Մ. Մոլերի ժխտողականությունը բարոյական եւ հոգեբանական հիվանդություն է, որ պատճառաբանված է մարդկային հոգեբանության բացասական գործոնների ողջ համակարգով, եւ ոչ մի շփման եզր չունի առողջ քննադատության հետ:

Եվ ինչպե՞ս հիվանդություն չհամարել տկար ճիգերը մամլո էջերում ազգային արժեքներին, հայ մշակույթի անդաստաններին, առանձին անհատներին թունոտ ժխտողականությամբ, հավակնոտ, եսակենտրոն, մաքսիմալիստականորեն ծայրահեղ սեւ որակավորումներով «ջնջելու» ոմանց մարմաջը:

Տգեղ եւ տխուր օրինակներից մեկը վերջերս Հայաստանի մամուլում ծավալված «հակամաքեւոսյանական» հիստերիան էր, որի հործանուտում ի վերջո կորան ճշմարիտ եւ ուսցած քննադատության անաչառ չափերը, եւ սեւն ու սպիտակը խառնվեցին սուբյեկտիվիզմի խարույկի վրա բլթբլթացող թե հեղինակներին, թե տպագրողներին, թե ընթերցողին անվայել ճղճիմ հայհոյանքների խզբզումների կաթսայում:

Բերենք եւս մեկ օրինակ: Լինում են նման հրապարակումների հեղինակներ, որոնց անունը հարկ էլ չես համարում հիշել-մասնանշել, զի դրանք, լինելով իրենց ծնող-սնող քաղաքական-սոցիալական-բարոյական ժամանակի եւ շրջապատի ուղղակի արդյունք, ավելի շատ եւ առավելապես հավաքական եւ խորհրդանշական կերպարներ են, որոնց միջոցով, գիտակցեն նրանք, թե ոչ, արտահայտվում-դրսեւորվում են իրենց հոգեհարազատ իրավակարգի գաղափարներն ու միտումները: Նմանների մասին խոսելիս, առավել իրավացիորեն մտաբերում ես նրանց երբեմնի ստանձնած իրենց պաշտոններով Նախարար մշակույթի... էքս-նախկին (իմա կրկնակի նախկին): Սա նրանց առավել անփոփ ու ճշմարիտ պատկերն է: Առավել եւս, եթե հիշողության անփոփ փոքր-ինչ հետ տանք «Հայկական կուլտուրայի ինքնահաստատման որոշակի ստրուկտուրան մահանում է: Այն մահանում է բնական մահով: Այն դատապարտված է մահվան»: ՀՀ մշակույթի էքս-նախկին նախարարի արված մահվան դատավճիռն է, որին հայ մշակույթն իր համար անակնկալ մի օր տեղեկացավ ժուռնալիստների տանը տեղի ունեցած մամլո ասուլիսում եւ ապա հանրապետության մամուլի էջերում: Եվ արդեն իսկ հարցերի մի ողջ զանգված էր առաջացել «հայ մշակույթի» մոտ, որին բյուրիմացաբար եւ միամտորեն թվում էր, թե ինքը սակավին գոյություն ունի, թե այդ ինչպե՞ս, ի՞նչ պատճառով, ո՞ւմ կամեցողությամբ, դարավոր ո՞ր բուրժուա-պարսկա-մոնղոլա-թաթարա թշնամու գրչի մի խզբզոցով մշակույթը, որն իր անփոփ հասկացությամբ հայ ժողովրդի հոգեւոր եւ ոգեղեն հավաքական ոգու եւ կարողությունների հիմնական, առաջնային դրսեւորումներից է, կարող է անջատվելով իր ակունքից ժողովրդից, որը շարունակում է ապրել, հանկարծակի մի գեղեցիկ օր մահանալ: Սակայն հարցերի պատասխանն իրենց սպասեցնել չտվեց նույն ծեծագրով հասարակական մշակու[illegible] ապարատը ներսից ժխտողական [illegible] մեկ այլ մամուլի «Խորհրդային շրջանում մշակույթի փոխարեն միայն գաղափարախոսություն է ստեղծվել, իսկ իսկական արվեստին վերաբերող առանձին ստեղծագործությունները կարելի է բնութագրել որպես հակախորհրդային» («Երկիր», թիվ 8, 1993):

Այստեղ դարձյալ հարց ծագեց. ո՞րն է ուրանալուն արժանի «խորհրդային մշակույթի» եւ խորհրդային շրջանում ստեղծված ազգային, միաժամանակ եւ համամարդկային արժեք ունեցող արվեստի միջեւ եղած անջրպետը: Օրինակ, Ա. Թամանյանի կերտած օպերայի եւ բալետի թատրոնի կոթողը խորհրդային արվեստի՞ն է պատկանում, թե՞ հակա... Ինչպես բնութագրել Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետը, որպես հաջողված հակախորհրդային գո՞րծ, թե արժե շուտափույթ եւ ազգովին ելնել ժխտելու համաշխարհային այդ գլուխգործոցը: Կամ Մարտիրոս Սարյանի ստեղծած դիմանկարների շարքն ըստ էության ինչպիսի՞ն է «կա՞», թե՞ «հակա»... Գուցե այդ տեսանկյունից անհրաժեշտ է անհապաղ պիտակավորել նաեւ Հ. Շիրազի «Դանթեականը» եւ Պ. Սեւակի «Անլռելի զանգակատունը»... Օրինակները բազում են:

Սակայն էքս-նախորդ նախարարը փութաց կանխել Հոգեւոր Հայաստանին իր հանճարեղ պայծառամտությամբ տրված դատավճռից բխող հարցերի տարափը եւս, եւ մամլո ասուլիսներում վստահեցրեց, որ իր նախաձեռնությամբ եւ հսկողությամբ մշակույթի նախարարությունում ստեղծված են 14 (ոչ ավել, ոչ պակաս) կառույց-միավորներ, հայոց մշակույթը շուտափույթ մահից փրկելու համար: Սակայն ինչպե՞ս ղեկավարել այն, ինչը «մեռած» է, չկա, ինչպե՞ս բացառիկ պարարտ ու լերկ հողի վրա բարձրացնել նոր մշակույթի շենքեր, դրան մեկտեղ ապարկը նետելով տասնյակ տարիների ընթացքում հայ ժողովրդի ստեղծած ազգային հոգեւոր արժեքները:

Այսօր մեզ ասած դժվար է, եթե ոչ իսկ անհնարին մասնանշել հայ մշակույթի անդաստանում որեւէ, թեկուզ թեթեւանշմար, թեկուզ դույզն-ինչ էական հետք, որ թողեցին էքս-նախկին նախարարն իր ստեղծած մեծախոսություններից, բայց իրականում ոչ ու փուչ այն կառույցների հետ:

Այո, ահավասիկ ախտաստանային եւ ստեղծագործական խոսք ծանրաբեռնվածությունը տալիս է իր ոչ դրական արդյունքը, եւ միգուցե, հայ արդի մշակույթը մեծապես կբարգավաճեր կրկնակի նախկին նախարար Հակոբ Մովսեսի պաշտոնավարության փուլում, ինչպես ոչ մեկի ժամանակ, իրենից առաջ եւ իրենից հետո, եթե մշակույթով զբաղվելու իր թանկ ու անդառնալի ժամանակը չքամաներ երկու այլ «խոսք կարեւոր ու հրատապ» ստեղծագործական խնդիրներին: Այն է. Նիցշեագիտությանը եւ... սմբասյանագիտությանը: Առաջինի արդյունքների մասին, ինչպես ինքն է տեղեկացնում, շուտով հնարավորություն կունենանք դառնալու հրապարակված համապատասխան աշխատությունից, իսկ ինչ վերաբերում է երկրորդ ասպարեզին, ապա դրանում հետա[illegible] հաջողությունները արդեն իսկ ակներեւ են:

Եվ այսպես, եթե առաջին մշակույթի բարձր արհեստավարժությամբ եւ մասնագիտական խոր ըմբռնումներով արված վերլուծությունը էքս-նախկին նախարարին հանգեցրել էր գիտական անսասան այն համոզմանը, որ հայ մշակույթը մահանում է իր բնական մահով, եւ որ, ըստ էության, ոչ մի հայ մշակույթ չկա եւ չի էլ եղել (բացառությամբ մեկ-երկու «հակախորհրդային» վրիպումների), ապա ոչ պակաս պրոֆեսիոնալիզմով եւ ներթափանցությամբ խորամուխ լինելով իր կյանքի եւ ստեղծագործության մեկ այլ կարեւորագույն ոլորտի մեջ, էքս-նախկին նախարարը եկել է այն միտքի եզրահանգման, որի գիտական լրջամտությունը, աներկբայորեն, նոր խոսք է արդի մարդաբանության գիտության մեջ: Այսպես, ուսումնասիրելով իր կողմից վերլուծվող «օբյեկտի» «ֆունկցիոնալ դրսեւորումների կազմաբանական առանձնահատկությունները» նիցշեագետ-սմբասյանագետը, ընթերցողի մոտ կասկած չհարուցելու ձգտումով նախ վստահեցնում է «Ես իրեն բավականաչափ լավ գիտեմ» եւ ապա վավերագրում է «Իմ կարծիքով նա (իմա էքս-նախորդ նախարարի հետնորդ նախարար Արմեն Սմբասյանը) ծագումնաբանորեն կենցաղով ճգնակյաց չէր... Իր մտահորիզոնը, կրթական մակարդակը (իսկապես, մեկը լիներ, ժամանակին բարի խորհուրդ տար Ա. Սմբասյանին նախարար դառնալուց առաջ զբաղվելու ֆոյերբախագիտությամբ: Թ. Հ.) ինչ համար էր այդ համակարգին...» («Հայաստանի Հանրապետություն», 25.04.1998):

Սույն հանրագիտակ խոր վերլուծությունը համեմվում է իսկական գիտնականին բնորոշ խոր վրձնահարվածով. «Նա մշակութային մարդ չէր եւ ընդհանրապես գաղափար չուներ մշակույթից...», որը կասկածանքի եւ ոչ մի տեղիք չի տալիս հետազոտող հեղինակի կողմից ուսումնասիրվող «օբյեկտի» կենսածրի ծագումնաբանությամբ, մարդաբանական տեսակի, կրոնադավանության, հոգեբանական կոնստիտուցիայի, կարմայի եւ ճակատագրի, երեկվա, այսօրվա, վաղվա եւ այլազան շատ կարեւոր բաղադրյալների բացառիկ խորաթափանց ուսումնասիրմանը եւ ճանաչմանը: Վերլուծության բարձրագույն մակարդակ, որ պատիվ կարող է բերել ցանկացած հետազոտող գիտնականին:

Բնականաբար հարց է առաջանում, նիցշեագիտության եւ զուգահեռաբար սմբասյանագիտության մեջ այդքան խորամուխ եղածը եւ նման հայտնաբերումներ կատարածն արդյո՞ք չունի որեւէ, թեկուզ չնչին թերացում իր կարկառուն ու բեղմնավոր գործունեության ծիրում:

Ունի: Եվ այդ մասին ինքն է խոստովանում գրեթե համակրանք առաջացնող հիանալի համեստությամբ. «Ես կարողացել եմ անել այն, ինչ մտածել եմ, չեմ արել այն, ինչ չեմ կարողացել» («Հայաստանի Հանրապետություն», 25.04.1998):

Իսկ այդ արածի գնահատակա՞նը: Չգիտես ինչու, այստեղ աչքիդ առջեւ հառնում է վերջերս օրը մի քանի անգամ մեր հեռուստատեսիլով ցուցադրվող գրոտեսկային ծաղրաժամավենը. «Ես լա՜ա՜ա՜վն եմ, էս երգը...»:

«Մենք մեր գործը կարծում եմ ա՜հի՜ ենք, այն կառավարությունը, ո՜րի կազմում ինքս եմ աշխատել, կարծում եմ **լավ** [illegible] է (Թ. Հ.) կառավարությունն է եղել:

Դե, իհարկե, «Ես լա՜ա՜ա՜վն եմ, էս երգը իմ մասին է»:

Այս հոդվածն էլ մեր մասին է:

Նրանց, ովքեր «լա՜ա՜ա՜վ արեցին իրենց գործը» ըստ էության եւ ոչ մի նոր ծաղկուն ճյուղ չավելացնելով հայ ժողովրդի գոյապահպանման հսկա բեկորին՝ նրա հոգեւոր անդաստանին, նրա մշակույթին: Սակայն ակնդետորեն, բարձրացրին հակամշակութային (նաեւ այլ հակա մշակութային-գիտական-կրթական) քաղաքականության ժխտողականության դրոշը, որն այսօր էլ, երբ անցել է «լա՜վ կառավարության» ժամանակը, շարունակում է ծածանվել մարսնչող մթամտությամբ:

Միգուցե, իսկապես, արդ եկել է «վերջին, ամենաարհամարհելի մարդու ժամանակը»: Նրանց, ովքեր սեփական չիրականանալը (բազում առումներով) հրապարակավ «մասնում» են ընթերցողին, ժողովրդին, կեղտաջուր լցնելով իրենց երեւույթ եւ աներեւույթ «թշնամիների» վրա: Հավանաբար դա էլ «վերջին» մարդուն բնորոշ հատկանիշներից մեկն է: Սակայն Նիցշեն Նիցշեով: Կար գերմանացի մեկ այլ ոչ պակաս հանճարեղ եւ հայերիս կողմից ուսումնասիրության արժանի փիլիսոփա Իմանուիլ Կանտը, որ գրել է «Der gesternte Himmel über uns, das moralische Gesetz in uns», ասել է, թե աստղալից երկինքը մեր վրա է, բարոյական օրենքը մեր մեջ է:

Եվ թվում է, արժե մերթընդմերթ խորհել այս խոսքերի մասին, որպեսզի փոփոխական ժամանակների գիշերային մութ պահերին, որպես աստղեր երկնքում, սեփական հոգու խորքում որոնել այդ աստվածատուր, չգրված, բայց եւ մարդկային, բարոյական օրենքը սեփական [illegible] ժողովրդավարությամբ իսկ հայհոյագիր տենդը մամլո ազատությամբ չփոխարինելու համար:

ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՐԱԺՇՏԱՐՎԵՍՏ

Թաթուլ Ալթունյանի անվան երգի-պարի պետական համույթը պատրաստվում է տոնել իր 60-ամյակը

Սկսած 1938-ից երգի-պարի շատ վարպետներ է ունեցել համույթը: Եկել է ժամանակը, որպեսզի գնահատվի անցած ճանապարհը, եւ նոր սերունդը հիշի բոլոր նրանց, ովքեր մեծ ջանք են դրել համույթի անվան, գոյության եւ, ի վերջո, ապագայի համար: Երկար տարիներ համույթը համերգներով հանդես է եկել Հայաստանի տարբեր շրջաններում: Իրենց տաղանդն ու կարողությունները են ցուցադրել ԱՄՆ-ի, Լիբանանի, Սիրիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի հայ համայնքներին:



Այժմ Թ. Ալթունյանի անվան երգի-պարի պետական համույթում պարում են երիտասարդներ, որոնք իրենց վրա են կրում համույթի հեղինակությունները չգցելու, ավելին՝ բարձրացնելու պատասխանատվությունը:

«Ես ցավով եմ տեսնում, որ այս 10 տարիների ընթացքում երգը, պարը շրջաններում չի հնչում այնքան հաճախ, ինչպես առաջ: Եվ դա տեղի է տալիս հայ ժողովրդի մշակույթին պատիվ չբերող երգ ու երաժշտությանը: Այդ առումով նպատակ ունենք համույթի 60-ամյակին համերգաշար անցկացնել Հայաստանի շրջաններում», ասում է գեղարվեստական ղեկավար Հենրի Մանգասարյանը:

Ցանկությունը կա, մնում է տեսնել, թե պետությունն ինչպես կֆինանսավորի ու կաջակցի այդ նախաձեռնությանը:

[illegible]
ԵՊՀ ժուռնալիստիկայի 4-րդ կուրսի ուսանողուհի

ՓԱՌԱՏՈՆ

[illegible]

մայիսի 9-ին, 21-ին հունիսի 4-ին, 28-ին

հրավիրում է Ձեզ

Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տուն
ՀՀ վաստակավոր արտիստ, [illegible] մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր

ՖԵԼԻՔՍ ՍԻՄՈՆՅԱՆԻ
(թավջութակ)

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԹԱՎՋՈՒԹԱԿԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՓԱՌԱՏՈՆԻՆ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ազգային օպերայի - թատրոնի կամերային նվագախմբի
դիրիժոր ՀՀ վաստակավոր գործիչ, պրոֆեսոր
[illegible]
ՀՀ վաստակավոր արտիստ, պրոֆեսոր
Վիլի Սարգսյանի
(դաշնամուր)

Փառատոնը [illegible]

Համերգների սկիզբը 18.00 / ին

[illegible]

ՖՈՒՏԲՈԼ

Կորոշեն պատասխան խաղերը

Հանրապետության գավաթի կիսաեզրափակիչները

Մայրաքաղաքի երկու թիմերի «Երեւանի» եւ «Փյունիկի» հանդիպումն սկսվեց վերջինիս ֆուտբոլիստների բուռն գրոհներով: Արդեն 3-րդ րոպեին վտանգավոր իրավիճակ ստեղծվեց «Երեւանի» դարպասի մոտ: Թիմի պաշտպանների սխալից հետո գնդակին տիրեց «Փյունիկի» ամենավտանգավոր խաղացող Վարազդատ Ավետիսյանը, մոտեցավ դարպասին եւ շեշտակի հարված կատարեց: Գնդակը միայն մի փոքր շեղությամբ անցավ դարպասաձողի կողքով: Ընդամենը 2 րոպե անց համարյա նման հնարավորություն փյունիկցիները կրկին ունեցան: Միայն այն տարբերությամբ, որ Վարդան Մինասյանի փոխանցումից հետո հարմար դիրքից վրիպեց Արսեն Ավետիսյանը: Ընդհանուր առմամբ «Փյունիկի» այս երեք խաղացողներն էին առավել ակտիվ, եւ առաջին խաղակեսում մի քանի անգամ կարող էին գրավել «Երեւանի» դարպասը: Հիշարժան էր 14-րդ րոպեն, երբ նրանք երկու չափազանց վտանգավոր գոլային պահեր ստեղծեցին: Իսկ 30-րդ րոպեին Արսեն Ավետիսյանի հարվածից հետո ձողափայտը հետ մղեց գնդակը: Իսկ «Երեւանի» ֆուտբոլիստները: Հանդիպման առաջին կեսում նրանց խաղը ինչ-որ չէր ստացվում: Արժե հիշատակել թերեւս միայն 29-րդ րոպեն, երբ [illegible] հրադրությունում «Երեւանի» խաղացողներից մեկի հարվածից հետո «Փյունիկի» դարպասապահը գնդակը որսաց ուղիղ դարպասի գծի վրա:

Թվում էր, թե երկրորդ խաղակեսում «Փյունիկը» վերջապես հաջողության կհասնի: Հատկապես այն բանից հետո, երբ ընդմիջման գնալուց 3 րոպե առաջ կոպիտ խաղի համար դաշտից հեռացվեց «Երեւանի» առանցքային խաղացողներից մեկը Սերժ Գոգուան: Սակայն, որքան էլ տարօրինակ թվա, թվական գերակշռությունն իրեն զգացնել չտվեց: Այս մրցաշրջանում արդեն երրորդ անգամ «Փյունիկը» երկրորդ խաղակեսը զգալիորեն թույլ անցկացրեց, քան առաջինը եւ դաշտում մոտավորապես հավասար խաղ գնաց: Պայքարն ընթացավ փոխնփոխ գրոհներով, որոնց սակայն պակասում էր սրությունը: Այդպես էլ «Հրազդան» կենտրոնական մարզադաշտում հավաքված ֆուտբոլասերները գոլի ականատես չեղան 0-0: Ամեն ինչ կվճռվի թիմերի պատասխան խաղի ժամանակ: Այն կրկին կանցկացվի «Հրազդանում»:

Բավականին հետաքրքիր պայքարում անցավ Երեւանի «Էրեբունի-ՀՄՄ» եւ Արարատի «Ցեմենտ» թիմերի հանդիպումը: «Էրեբունին», կարծես թե դաշտի տիրոջ իրավունքով, ավելի հաճախ էր գրոհում: Բավականին ակտիվ էին Սեւադա Արզումանյանը, Ռազմիկ Գրիգորյանը: Հաճախ նրանց էր միանում նաեւ Աշոտ Ավետիսյանը: «Ցեմենտի» ֆուտբոլիստներն ավելի շուտ պաշտպանվում էին իրենց դարպասի անվտանգությունը, չմոռանալով, իհարկե, նաեւ սուր հակագրոհների մասին: Այդ ժամանակ բավականին համարձակ էին գործում նրանց երկու հարձակվողները Արամ Սարգսյանը եւ հատկապես Շիրակ Սառիկյանը: Այդպիսի մի հակագրոհի ժամանակ, խաղի 14-րդ րոպեին, Սառիկյանը եզրում պայքարի մեջ մտավ մրցակցի պաշտպանների հետ, այնուհետեւ գնդակը փոխանցեց իր խաղընկերոջը, եւ Սարգսյանը գլխի գեղեցիկ հարվածով գրավեց «Էրեբունու» դարպասը 0-1: Հետագայում եւս խաղը մոտավորապես նույն կերպ ընթացավ: Թե առաջին, թե երկրորդ խաղակեսում երկու թիմերն էլ խաղի հաշիվը փոխելու մի քանի նպաստավոր հնարավորություններ ունեցան, սակայն այդպես էլ մինչեւ հանդիպման ավարտը նոր գոլ չգրանցվեց: Իհարկե, Արարատում կայանալիք երկրորդ խաղից առաջ «Ցեմենտի» հնարավորությունները գերադասելի են:

Հիշեցնենք, որ հանրապետության գավաթի կիսաեզրափակիչ փուլի պատասխան հանդիպումները կանցկացվեն մայիսի 23-ին:

ԼՈՒՐԵՐ

Միայն մեկ մեդալ

Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավայում ավարտվեց ազատ ոճի ըմբշամարտի Եվրոպայի առաջնությունը, որին մասնակցեցին նաեւ Հայաստանի մարզիկները: Մեր հանրապետության ըմբիշներից առավել հաջող հանդես եկավ աշխարհի կրկնակի չեմպիոն Արա Գեւորգյանը (76 կգ քաշային կարգ), որն այս անգամ գրավեց երկրորդ տեղը եւ պարգեւատրվեց արծաթե մեդալով: Մեր մյուս ճանաչված ըմբիշը՝ Ատլանտայի օլիմպիական խաղերի փոխչեմպիոն Արմեն Մկրտչյանը, որը հանդես եկավ 54 կգ քաշային կարգում, գրավեց 5-րդ տեղը: Հանրապետության մյուս մարզիկները անհաջող հանդես եկան:

Չորս մասնակիցներով

Մայիսի 13-17-ը Իսպանիայի Օվյեդո քաղաքում կանցկացվի ձյուդոյի Եվրոպայի առաջնությունը: Մրցումներին կմասնակցեն նաեւ Հայաստանի չորս ներկայացուցիչները՝ Ղազարոս Գրիգորյանը (60 կգ քաշային կարգ), Խաչատուր Առաքելյանը (65 կգ), Լեւոն Գալստյանը (73 կգ) եւ Հարություն Ղարիբյանը (81 կգ): Բոլոր չորս մարզիկներն էլ Երեւանի ներկայացուցիչներ են: Նրանց հետ Իսպանիա է մեկնել մարզիչ Անդրանիկ Անտիկյանը:

Նշեցին իրենց օրը

Թեթեւ ատլետիկայի միջազգային ֆեդերացիայի որոշմամբ մայիսի 10-ը նշվում է որպես մարզաձեւի համաշխարհային օր: Այդ օրը աշխարհի համարյա բոլոր երկրներում ամենատարբեր կարգի մրցումներ են անցկացվում: Թեթեւ ատլետիկայի օրը նշվեց նաեւ մեզանում: Արտաշատի քաղաքային մարզադաշտում անցկացված մրցումներում հանդես եկան հանրապետության բոլոր մարզերը ներկայացնող 130 մարզիկներ: Աչքի ընկան հեռացատկորդները: Հաղթող դարձավ երեւանցի թեթեւատլետ Վահագն Ջավախյանը, որը ցույց տվեց 7 մ 34 սմ արդյունք: Երկրորդ տեղը գրավեց Էրիկ Նուրիջանյանը (Կապան)՝ 7 մ 10 սմ, երրորդը՝ Կարեն Քարամյանը (Երեւան)՝ 7 մ 07 սմ: Վերջին երկու մարզիկները համաշխարհային պատանեկան խաղերին մասնակցելու թեկնածուներ են: Մոսկվայում կայանալիք այդ կարեւոր ստուգատեսում հանդես գալու հնարավորություններ ունի նաեւ կանանց հեռացատկի մրցումների հաղթողը՝ Տատյանա Հովհաննիսյանը (Երեւան), որի արդյունքն է 5 մ 50 սմ:

ՇԱԽՄԱՏ

Նախագահի գավաթի համար

Կալմիկիայի նախագահ Կիրսան Իլյումժինովի գավաթի խաղարկությունը սկսվեց որոշ ուշացումով: Բանն այն է, որ մրցումներին շտապող Մայա Չիբուրդանիձեն, Զուրաբ Ազմայփարաշվիլին եւ Կիրիլ Գեւորգիեւը ավտովթարի ենթարկվեցին: Վոլգոգրադ-Էլիստա խճուղուց գլորված մարդատար ավտոմեքենայի վարորդն ու բուլղար գրոսմայստեր Գեւորգիեւին ոչինչ չպատահեց, սակայն Վրաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահ Ազմայփարաշվիլին եւ աշխարհի բազմակի չեմպիոն Չիբուրդանիձեն լուրջ վնասվածքներ ստացան: Նրանց առողջական վիճակը բարելավվեց, բայց ոչ այնքան, որպեսզի նրանք կարողանային մասնակցել մրցումներին: Նրանց փոխարինողներ գտնվեցին վրաց շախմատիստ Գիա Գեւորգաձեն եւ Կալմիկիայի ուժեղագույն շախմատիստներից մեկը:

Ինչպես արդեն հայտնել ենք, աշխարհի վերջին առաջնության մրցակարգով անցկացվող այս մրցաշարում հանդես են գալիս շատ հայտնի գրոսմայստերներ: 32 մասնակիցներից 20-ը տեղեր են գրավում աշխարհի ուժեղագույնների առաջին հարյուրյակում: Էլիստայի մրցումների մասնակիցների թվում էին նաեւ Հայաստանի երկու ներկայացուցիչներ՝ Ռաֆայել Վահանյանը եւ Վլադիմիր Հակոբյանը:

Եվ ցավով պետք է ասենք «էին», քանի որ օլիմպիական մրցակարգով անցկացվող մրցումների հենց առաջին փուլում մոլդավ գրոսմայստեր Վիկտոր Բոլոգանից 0,5-1,5 հաշվով պարտություն կրեց եւ հետագա պայքարից դուրս մնաց մեր Վլադիմիր Հակոբյանը: Իսկ Վահանյանը 2-0 հաշվով պարտության մատնեց Կալմիկիայի ուժեղագույն շախմատիստ Բաադր Շովունովին եւ այժմ մրցումների 1/8 փուլում կհանդիպի Կիրիլ Գեւորգիեւի հետ: Բուլղար շախմատիստը առաջին փուլում 1,5-0,5 հաշվով հաղթել է Եվգենի Սվեշնիկովին (Ռուսաստան):



Ռաֆայել Վահանյան

ԹԵՆԻՍ

Հինգիսի նոր հաղթանակը

Կիրակի օրը թենիսի խոշոր մրցաշարեր ավարտվեցին Համբուրգում եւ Հռոմում:

Գերմանական Համբուրգ քաղաքում անցկացված ATP շարքի մրցաշարի մրցանակային հիմնադրամը 2 մլն 450 հազար դոլար էր: Թերեւս, նաեւ դա էր պատճառը, որ այստեղ հանդես եկան աշխարհի համարյա բոլոր ուժեղագույն թենիսիստները: Մրցաշարը բաց թողեցին միայն ռեյտինգ ցուցակի առաջին եւ երկրորդ տեղերում ընթացող Փիթ Սամփրասը (ԱՄՆ) եւ Պետր Կորդան (Չեխիա):

Մարտինա Հինգիս

Մրցաշարում տոն տվողները իսպանացիներն էին: Այսպես կիսաեզրափակիչներից մեկում Ալեքս Կարետյան 6-2, 3-6, 6-3 հաշվով հաղթեց Ֆելիքս Մանտիլյային, իսկ մյուսում նրանց հայրենակից Ալբերտո Կոստան եզրափակիչ դուրս եկավ խաղի սկզբից 30 րոպե անց, երբ Կարել Կուչերան (Սլովակիա) վնասվածքի պատճառով չկարողացավ պայքարը շարունակել: Կոստա-Կարետյա վճռական խաղում առաջին երկու խաղափուլերը Կոստան հեշտությամբ շահեց (6-2, 6-0), սակայն այս անգամ էլ Կարետյան վնասվածք ստացավ եւ Ալբերտո Կոստան տիրացավ գլխավոր մրցանակին: Բավականին ուժեղ էր Իտալիայի մայրաքաղաքում անցկացված կանանց մրցաշարի կազմը: Մեծ հետաքրքրություն էր առաջացել առաջին անգամ եվրոպական խաղադաշտերում հայտնված ամերիկուհիներ Վենուս եւ Սերենա Վիլյամսների մասնակցությունը: Շատերն էին սպասում աշխարհի թիվ 1 ռակետ Մարտինա Հինգիսի (Շվեյցարիա) եւ սեւամորթ քույրերի մրցակցությանը: Բանն այն է, որ այս տարի քույրերից ավագը Վենուսը, արդեն երկու անգամ հաղթել է Հինգիսին: Հռոմի մրցաշարի եզրափակիչ խաղում հենց այս երկու մարզուհիներն էլ վիճարկեցին հաղթողի կոչումը: 17-ամյա թենիսուհիների համար մրցավեճն այս անգամ ավարտվեց Մարտինա Հինգիսի հաղթանակով 6-3, 2-6, 6-3:

Ավելացնենք, որ մրցաշարի մրցանակային հիմնադրամը 926 հազար դոլար էր:

Առջեւում վճռական փուլն է

Հոկեյի աշխարհի առաջնությունում ավարտվեց երկրորդ փուլը: Երկրորդ եւ երրորդ տուրերում այսպիսի արդյունքներ գրանցվեցին. «E» խումբ (Ցյուրիխ). Կանադա-Ֆինլանդիա 3-3, Շվեդիա-Բելառուս 3-1, Շվեդիա-Կանադա 7-1, Ֆինլանդիա-Բելառուս 5-2:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Տ	Մ
1. Շվեդիա	3	3	0	0	11-2	6
2. Ֆինլանդ.	3	2	0	1	8-6	4
3. Կանադա	3	1	0	2	10-12	2
4. Բելառուս	3	0	0	3	5-14	0

«F» խումբ (Բազել). Ռուսաստան-Սլովակիա 6-1, Չեխիա-Շվեյցարիա 3-1, Ռուսաստան-Չեխիա 2-2, Շվեյցարիա-Սլովակիա 1-1:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Տ	Մ
1. Չեխիա	3	2	1	0	6-3	5
2. Շվեյցար.	3	1	1	1	6-6	3
3. Ռուսաս.	3	1	1	1	10-7	3
4. Սլովակիա	3	0	1	2	2-8	1

Այսպիսով, այսօր կայանալիք կիսաեզրափակիչ խաղերում կհանդիպեն Շվեդիա-Շվեյցարիա եւ Չեխիա-Ֆինլանդիա զույգերը: Այս փուլում պարտություն կրած թիմերը մայիսի 15-ին կվիճարկեն առաջնության բրոնզե մեդալները, իսկ հաղթողները մայիսի 16-ին եւ 17-ին կպայքարեն աշխարհի չեմպիոնի կոչման համար:

ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

Հայ բռնցքամարտիկների փայլուն հաջողությունը

Ռուսաստանի Սարատով քաղաքում անցկացված բռնցքամարտի պատանեկան եւ երիտասարդական միջազգային մրցաշարերում փայլուն հաջողության հասան Հայաստանի ներկայացուցիչները: Մրցումները, որոնք նվիրված էին Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 53-րդ տարեդարձին, մասնակցեցին 13 թիմերի 150 մարզիկներ:

Ավագ տարիքի պատանիների մրցումներին մասնակցած մեր 7 բռնցքամարտիկներից 2-ը դարձան չեմպիոններ, 3-ը՝ երկրորդ, 2-ը՝ երրորդ մրցանակակիրներ: Արժե, որ բոլորին ներկայացնենք ըստ քաշային կարգերի. 45 կգ-Մխիթար Դավթյան (ՕՀՀՈՒ, Երեւան)՝ 1-ին տեղ, 48 կգ-Հարություն Թովմասյան («Հայաստան» մմ, ՕՀՀՈՒ, Երեւան)՝ 2-րդ տեղ. նրան շնորհվեց նաեւ լավագույն տեխնիկա ցուցադրած բռնցքամարտիկի համար սահմանված մրցանակը, 51 կգ-Էռնեստ Կարապետյան (բռնցքամարտի հանրապետական դպրոց, Երեւան)՝ 3-րդ տեղ, 54 կգ-Արման Պետրոսյան («Հայաստան» մմ, ՕՀՀՈՒ)՝ 1-ին տեղ եւ Արտակ Մանուկյան («Հայաստան» մմ)՝ 3-րդ տեղ, 60 կգ-Հովհաննես Բարսեղյան (բռնցքամարտի հանրապետական դպրոցի էջմիածնի մասնաճյուղ)՝ 2-րդ տեղ, 69 կգ-Ռաֆիկ Հակոբյան (ԲՀԴ, էջմիածնի մասնաճյուղ)՝ 2-րդ տեղ:

Երիտասարդների մրցաշարին մասնակցեցին մեր հանրապետության երկու բռնցքամարտիկներ: 60 կգ քաշային կարգում հանդես եկած Արթուր Մելքումյանը (ԲՀԴ) գրավեց 3-րդ տեղը, իսկ 63,5 կգ քաշային Արտակ Մալումյանը («Դինամո», Վանաձոր)՝ 2-րդ:

Թիմային հաշվարկում մեր բռնցքամարտիկները գրավեցին առաջին տեղը եւ արժանացան լավագույն թիմի համար սահմանված հատուկ մրցանակին:

Ավելացնենք, որ Հայաստանի բռնցքամարտիկների հաջողության մեջ մեծ է ՀՀ վաստակավոր մարզիչներ Ֆեդյա Ալեխանյանի եւ Պավլիկ Ղարսլյանի ներդրումը:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՌԱԶՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ԱՄՆ

Թուրքական բանկերը պետք է վերադարձնեն հայերի գումարները

Հարութ Սասունյանի ստորեւ թարգմանաբար ներկայացվող հոդվածն անդրադառնում է թուրքական բանկերի դեմ ամերիկահայերի սկսած արշավին:

Հայկական համագումարն անցյալ ամիս մի օրենսդրական նախաձեռնություն ներկայացրեց, որով Ամերիկայում գործող թուրքական բանկերից պահանջվում է պատրաստել եւ հայտնել 1915-ի ցեղասպանությունից ի վեր պահ դրված եւ ցարդ չպահանջված հայկական հաշիվների ամբողջական ցուցակը:

Մի տարի առաջ ես իմ սյունակում առաջարկել էի հետամուտ լինել բոլոր թուրքական եւ եվրոպական բանկերում ցեղասպանության զոհ դարձած հայերի պահ տված գումարների բացահայտմանը: Այնպես որ, այժմ ողջունում եմ հայկական համագումարի նախաձեռնությունը, պնդելով, սակայն, որ թուրքական բանկերից բացի գործին առնչվեն նաեւ ֆրանսիական, շվեյցարական, ամերիկյան, ռուսական եւ գերմանական գլխավոր բանկերը: Մենք պետք է պահանջենք այդ բանկերից, որ ցարդ անօրինական կերպով պահված բոլոր հաշիվները վերադարձնեն իրենց իսկական տերերին, նրանց հետնորդներին կամ զոհերին հատուցում վճարելու նպատակով կազմված հայկական բարեգործական հիմնադրամին: Եթե այդ բանկերը մերժեն համագործակցել, մենք կարող ենք դիմել ֆեդերալ կամ նահանգային ատյաններին նրանց բոլոր տեսակի գործունեությունները Միացյալ Նահանգներում դադարեցնելու պահանջով: Այլ արգելք պետք է դրվի ոչ միայն այդ բանկերի, այլեւ նրանց բոլոր մայր ընկերությունների եւ հարակից մասնաճյուղերի վրա: Մենք կարող ենք նույնպես դիմել Ամերիկայում դատական գործ հարուցելու քայլին, պահանջելով առգրավել ԱՄՆ-ում այդ բանկերի ակտիվը ճիշտ այնպես, ինչպես հրեաներն են անում վերստանալու ողջակիզման ժամանակ իրենց կորցրած դրամական հաշիվները:

Դարասկզբին թուրքական ամենամեծ բանկերից մեկը Բանկ Օտոմանն էր, որն այսօր էլ դեռ գործում է, եւ ամբողջովին պատկանում է Գարանտի բանկին, որն էլ իր հերթին համարյա ամբողջությամբ (86 տոկոսով) պատկանում է Թուրքիայի մեծագույն միավորումներից (կոնգլոմերատ) Դողուշ Գրուպին: Գարանտի բանկն ինքն էլ Թուրքիայի ամենամեծ սեփական առեւտրական բանկերից մեկն է:

Մենք պետք է տեղեկություններ հավաքենք Բանկ Օտոմանի, Գարանտի բանկի, Դողուշ Գրուպի եւ ԱՄՆ-ում նրանց մասնաճյուղերի գործունեությունների մասին: Թուրքական այդ հաստատությունների վրա ազդելու մյուսը ձեւը նրանց հովանավորողների եւ հաճախորդների միջոցով է: Մենք կարող ենք պահանջել, որ ամերիկյան ընկերություններից ոչ մեկը գործարար կապեր չհաստատի նրանց հետ մինչեւ որ նրանք բավարարեն մեր պահանջները: Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ), որը Համաշխարհային բանկի մասնաճյուղերից է, ներկայիս պատրաստվում է 104 մլն դոլարի փոխառություն տալ Բանկ Օտոմանին, որն օգտագործելու է այդ գումարը նոր միջազգային ներդրողներ գրավելու նպատակով: Մենք կարող ենք հաղորդակցության մեջ մտնել ՄՖԿ-ի, ՀԲ-ի եւ այն երկրների հետ, որոնք նրանց ֆինանսավորումն են հաստատում, եւ պահանջել, որ նման փոխառություն չհայթայթեն Բանկ Օտոմանին: Հուսով ենք, որ թուրքական եւ մյուս միջազգային բանկերն ամբողջովին կհամագործակցեն մեզ հետ գիտակցելով, որ մենք պարզապես պահանջում ենք այն, ինչ օրենքով մեզ է պատկանում: Մենք չենք ցանկանում նրանց գործունեությունը խափանել կամ նրանց գումարներից հավելյալ մի պենս կամ մի ցենտ կորզել: Բայց եթե նրանք չհամագործակցեն, մենք պատրաստ ենք դիմել ամեն տեսակի օրինական միջոցների հասնելու մեր նպատակին:

Խմբ. կողմից.- Ի հավելումն վերոհիշյալ պահանջների, անհրաժեշտ է ճշգրտել եւ նույնանման պահանջներ դնել հատկապես եվրոպական ապահովագրական մեծ ընկերությունների առջեւ, որոնց մոտ մինչեւ Մեծ եղեռնը Օսմանյան Թուրքիայում ապրող բազմաթիվ հայեր առեւտրական անձնական ունեցվածքի ու կյանքի ապահովագրություն ունեին:

Թուրքական մամուլը շարունակում է վարկաբեկել Պոլսի հայոց պատրիարքական փոխանորդին

ՍՏԱՄԲՈՒԼ, 11 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Ստամբուլի «Մարմարան» տեղեկացնում է, որ մայիսի 8-ին թուրքական TGRT հեռուստակայանը, շարունակելով վերջերս «Թյուրքիե» եւ մի քանի այլ թերթերի նախաձեռնությունը, ծայր աստիճան ծանր մեղադրանքներ է ուղղել Պոլսի հայոց պատրիարքական փոխանորդ Մեսրոպ արք. Մութաֆյանի դեմ: Հեռուստահաղորդման հիմնական իմաստն այն էր, որ իբր թե Մեսրոպ սրբազանը քաղաքականությունը խառնել է կրոնական գործերին: Հեռուստակայանը մեջբերել է Լոս Անջելեսի «Ասպարեզ» թերթին 1988 թ.-ին Մեսրոպ սրբազանի կողմից իբր թե կատարված հայտարարությունից, որտեղ արքեպիսկոպոսը խոսել է «Ցեղասպանության» մասին եւ մեղադրանքներ ուղղել այն թերթերի հասցեին, որոնք թուրք-հայկական հարաբերություններում դրական կեցվածք են ունեցել: Պնդվել է, թե Մեսրոպ սրբազանը ժամանակին չի հերքել «Ասպարեզին»: «Մարմարայի» համաձայն ըստ հեռուստահաղորդման, հայտնի չէր, կայանը որտեղից է ձեռք բերել այդ հայտարարությունը եւ թե այն որքանով է համապատասխանում եկեղեցականի արած հայտարարությանը: Կապվելով «Մարմարայի» հետ Մեսրոպ սրբազանը հայտնել է, որ հեռուստակայանն իրեն է վերագրում «Ասպարեզի» խոսքերը եւ թե ինքը փաստաթղթեր է հավաքում կայանից հերքում պահանջելու համար:

Պատրիարքարանից տեղեկացրել են նաեւ, որ Մեսրոպ սրբազանը շահել է «Թյուրքիե» թերթի դեմ դատը: Ստամբուլի գլխավոր դատավորի կայացրած վճռի համաձայն հիշյալ թերթում հրատարակված հոդվածը վարկաբեկում է Մեսրոպ սրբազանին եւ անվանարկում: Դատարանը պարտադրել է թերթին հրատարակել արքեպիսկոպոսի պատասխան նամակը:

Պատրիարքարանը կրոնական ժողով է գումարել եւ պախարակել է մամուլի միջոցներին կեղծ լրատվությամբ Թուրքիայում Հայ առաքելական եկեղեցու կրոնական վարչության ներկայացուցիչներին անվանարկելու փորձերի առթիվ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ
ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՐԵՎԱՆՈՒՄ
ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

շինանյութերի, էլեկտրական սարքերի, գրասենյակային եւ տնային կահույքի աճուրդի,
որը տեղի կունենա 1998 թ. մայիսի 16-ին,
Գրիբոյեդով-60 հասցեում,
ժամը 8:00-ից մինչեւ ավարտվելը:

Աճուրդի անցկացման կարգի վերաբերյալ մանրամասն տեղեկությունների եւ ապրանքների դիտման համար, 1998 թ. մայիսի 15-ին, ժամը 9:00-12:00 Գրիբոյեդով-60 հասցեում կանցկացվի ապրանքների նախնական ցուցադրում եւ ցանկացողների ցուցակագրում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ARMENPRESS

Արմենպրես լրատվական գործակալության համակարգչային կենտրոնը առաջարկում է՝

- ✓ Web Page-երի ձեւավորում եւ տեղադրում Internet
- ✓ էլեկտրոնային թերթերի տեղադրում Internet
- ✓ էլեկտրոնային փոստի ծառայություններ
- ✓ Ծրագրային ապահովում DOS, WIN95, WIN NT, UNIX (FreeBSD) օպերացիոն համակարգերում
- ✓ Ցանկացած գրաֆիկական աշխատանքներ
- ✓ Համակարգչային դասընթացներ

Հասցեն՝ Երեւան, Իսահակյան 28,
IV հարկ, I սենյակ, հեռ. 52 67 32
E-mail: norik@armenpress.am

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

36x7.5x15 մ չափսերով երկաթե քանդվող անգար, որը կարելի է օգտագործել որպես պահեստ, արտադրամաս, ինչպես նաեւ այլ նպատակներով: Անգարը տեղադրված է Էրեբունու շրջանի Ջրաշեն գյուղում: Գինը՝ 2000 դոլար:

Հեռախոս՝ **23-41-03, 57-42-46**

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոտնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:

Զանգահարել 27 22 57 ժամը 10-16, 58 33 26 ժամը 18-23

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

5 սենյականոց բնակարան
Արցախի փողոց շ. $8^{ա}$, բն. 44
Հեռ՝ 44-72-85, 44-71-45

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

կիսանկուղային տարածք 132,6 քմ. ընդհանուր մակերեսով, վերանորոգված, ունի սանհանգույց:
Հասցեն՝ Նալբանդյան 29
Տեղեկությունների համար զանգահարել 57-16-16 հեռախոսահամարով:

Կխնամեմ

երեխա, 10 ամսականից բարձր:
Զանգահարել 248856, 553701:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

4 սենյականոց բնակարան
(Դավիթաշեն, II թաղամաս, 3-րդ շենք, բն. 4):
Զանգահարել 72-89-83

Robin Generators RGX3500

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

բենզինով աշխատող միաֆազ էլեկտրագեներատորներ: ☎ 529353

հաճախակ.	մաքս. հզ.	նոմ. հզ.	աշխ. ժամ	տարող.
50 Հց	3.0 կվտ	2.5 կվտ	7.1 ժ	13 լ
60 Հց	3.5 կվտ	3.0 կվտ	6.1 ժ	



ԿՐԵԴԻՏ-ԵՐԵՎԱՆ ԲԱՆԿ CREDIT-YEREVAN BANK

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Շարունակելով համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ «Կրեդիտ-Երեւան» բանկը հանդիսանում է «Windsor Stock Trading Co. Ltd» խոշորագույն բրոքերային կազմակերպության լիազոր ներկայացուցիչը Հայաստանում:

Ներդնելով կապի նոր համակարգ, բանկը անմիջականորեն առք ու վաճառք է կատարում Լոնդոնի ֆոնդային բորսայում:

Վերոհիշյալ գործառնությունները կատարելու համար բանկը աշխատանքի է հրավիրում անգլերենի պարտադիր իմացությամբ եւ ցանկալի է տեխնիկական վերլուծություն անելու ունակությամբ երիտասարդ աղջիկների եւ տղաների:

Ցանկացողները մինչեւ մայիսի 22-ը դիմեն «Կրեդիտ-Երեւան» բանկի բորսային գործառնությունների բաժին:

Հեռախոս 524352

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69140. Պատվեր 819. Տպաքանակը 3500. Ստորագրված է տպագրության 11.05.1998. Գինը 100 դրամ